

# Փողերի լվացման գործերի քննության ուղեցույց

*Հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման,  
ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման  
ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական  
հանձնաժողովի 2023թ. մարտի 2-ի նիստում*

# Բովանդակություն

<b>Նախաբան</b> .....	<b>2</b>
<b>Գլուխ 1. Փողերի լվացման դեմ պայքարի իրավական համակարգը</b> .....	<b>3</b>
1. Միջազգային իրավունքը և դատական պրակտիկան .....	3
2. Ներպետական իրավունքը և դատական պրակտիկան.....	11
<b>Գլուխ 2. Մինչդատական վարույթի առանձնահատկությունները</b> .....	<b>18</b>
1. Քրեական վարույթի նախաձեռնումը և քննության պլանավորումը .....	18
2. Ֆինանսական քննության իրականացումը .....	21
<b>Գլուխ 3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի և իրավապահ մարմինների համագործակցությունը</b> .....	<b>28</b>
1. Ֆինանսական հետախուզության մարմինների դերը և գործառույթները .....	28
2. ՖԴԿ-ի տրամադրած տեղեկությունների օգտագործումը և համագործակցության ձևաչափը .....	31
<b>Գլուխ 4. Ակտիվների վերականգնումը</b> .....	<b>34</b>
1. Հանցավոր գույքի բռնագրավումը մեղադրական դատավճռի հիման վրա .....	34
2. Հանցավոր գույքի բռնագրավումն այլ մեխանիզմների օգտագործմամբ .....	36
<b>Գլուխ 5. Միջազգային համագործակցությունը</b> .....	<b>39</b>
1. Վարչական փոխօգնությունը .....	39
2. Փոխադարձ իրավական օգնությունը .....	42
<b>Օգտակար հղումներ</b> .....	<b>49</b>
<b>Հավելված 1. Միջազգային պայմանագրերի ցանկ</b> .....	<b>50</b>
<b>Հավելված 2. Միջազգային հարցման օրինակելի ձև</b> .....	<b>52</b>

# Նախաբան

Սույն ուղեցույցի նպատակն է փողերի լվացման դեմ պայքարի միասնական քաղաքականության շրջանակներում փողերի լվացման հանցագործությունների քննության առանձնահատկությունների սահմանումը:

Ուղեցույցի առաջին գլխում անդրադարձ է կատարվում փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրությանը՝ ներառյալ ոլորտի միջազգային-իրավական կարգավորումներին, ինչպես նաև միջազգային և ներպետական դատական պրակտիկային: Երկրորդ գլխում ներկայացված են փողերի լվացման գործերով քննություն առանձնահատկությունները, զուգահեռ ֆինանսական քննության էությունը և դրա իրականացման հնարավոր եղանակները: Երրորդ գլուխը նվիրված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և իրավապահ մարմինների միջև համագործակցությանը և ներառում է տեղեկություններ տվյալների փոխանակման դեպքերի և փոխանակվող տվյալների կարգավիճակի վերաբերյալ: Չորրորդ գլխում ներկայացված են հանցավոր գույքի բռնագրավման մեխանիզմները, դրանից յուրաքանչյուրի հատկանիշները և կիրառման դեպքերը: Հինգերորդ գլուխը պարունակում է տեղեկություններ փողերի լվացման գործերով միջազգային համագործակցության եղանակների, վարչական փոխօգնության իրականացման և փոխադարձ իրավական օգնության հարցումների ուղարկման վերաբերյալ: Ուղեցույցը պետք է ընթերցել և կիրառել դրա ամբողջության շրջանակներում՝ չսահմանափակվելով որևէ թեմայի շուրջ առանձին գլխում ներառված տեղեկություններով ու առաջարկվող հնարքներով:

Ուղեցույցը նախատեսված է փողերի լվացման և դրան նախորդող հանցագործությունների քննություն իրականացնող քննիչների, դատախազների և հետաքննության մարմինների և դատավորների համար:

# Գլուխ 1. Փողերի լվացման դեմ պայքարի իրավական համակարգը

## 1. Միջազգային իրավունքը և դատական պրակտիկան

### *ա. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը*

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դասվում է անդրազգային (տրանսնացիոնալ) բնույթ կրող այնպիսի հանցագործությունների շարքին, ինչպիսիք են ահաբեկչությունը, մարդկանց առևտուրը, թմրաբիզնեսը և այլն: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանրային բարձր վտանգավորությամբ է պայմանավորված դրա դեմ պայքարին նվիրված միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերի առկայությունը:

Այսպես՝ միջազգային իրավական համակարգում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում՝ (փողերի լվացում) հասկացությունը սահմանվել է **«Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին»** Միացյալ ազգերի կազմակերպության 1988 թվականի Վիեննայի կոնվենցիայով (Վիեննայի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականին: Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխելու նպատակով Վիեննայի կոնվենցիան նախատեսում է միջազգային-իրավական համալիր միջոցառումների անցկացում և որպես նշված միջոցառումների բաղկացուցիչ մաս միջազգային մակարդակում առաջին անգամ ճանաչում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը: Վիեննայի կոնվենցիան մասնակից պետություններին պարտավորեցնում է իրենց օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն սահմանել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը միջազգային իրավական համակարգում առաջին անգամ ամբողջական և համակարգված կարգավորում է ստացել Եվրոպայի խորհրդի 1990 թվականի՝ **«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին»** Ստրասբուրգի կոնվենցիայում (Ստրասբուրգի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2003 թվականին: Ստրասբուրգի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ներպետական մակարդակում քրեաիրավական միջոցներ ձեռնարկել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի, ինչպես նաև

քրեական գործերի քննության ընթացքում միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ:

Վիեննայի և Ստրասբուրգի կոնվենցիաները պետությունների համար անկյունաքար են հանդիսացել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի բնագավառում ներպետական օրենսդրությունը մշակելու համար:

1989 թվականին Փարիզում հիմնադրվել է **«Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը»** (այսուհետ՝ ՖԱԹՖ), որն ի սկզբանե նպատակ է հետապնդել համակարգելու փողերի լվացման ուղղությամբ միջազգային գործունեությունը: ՖԱԹՖ-ի կողմից տարբեր տարիների ընթացքում մշակված հանձնարարականները պետությունների համար նախատեսում են քրեական արդարադատության ոլորտի և իրավական կարգավորման համակարգի միջոցառումներ, որոնցով պետք է հակազդել փողերի լվացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը: Հանձնարարականները ներառում են նաև կանխարգելման միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև այլ կազմակերպությունների և անձանց կողմից: ՖԱԹՖ-ի հանձնարարականները լայն տարածում են գտել՝ վերաճվելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային չափանիշների:

Միացյալ ազգերի կազմակերպության կողմից 2000 թվականին ընդունվել է **«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ»** Պալերմոյի կոնվենցիան (այսուհետ՝ Պալերմոյի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2003 թվականին: Պալերմոյի կոնվենցիան, մասնակից պետություններին պարտավորեցնելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դիտարկել որպես հանցագործություն, միաժամանակ որպես նախորդող հանցակազմ առաջարկում է դիտարկել բոլոր ծանր հանցագործությունները: Պալերմոյի կոնվենցիան անդրադառնում է նաև դատական համագործակցության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավման հարցերին:

Եվրոպայի խորհրդի կողմից 2005 թվականին ընդունվել է **«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»** Վարշավայի կոնվենցիան (այսուհետ՝ Վարշավայի կոնվենցիա), որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008 թվականին: Վարշավայի կոնվենցիան, ըստ էության, Ստրասբուրգի կոնվենցիայի կատարելագործված խմբագրությունն է: Այն ավելի է ընդլայնում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի քրեաիրավական կանխարգելիչ միջոցները: Վարշավայի կոնվենցիան կարգավորում է ահաբեկչության ֆինանսավորման,

ներպետական մակարդակում ձեռնարկվող միջոցառումների, միջազգային համագործակցության, մոնիտորինգի մեխանիզմների, վեճերի լուծման հետ կապված հարցեր:

*բ. Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները*

Նշված միջազգային պայմանագրերը փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում նախատեսում են մի շարք պարտականություններ անդամ պետությունների համար, այդ թվում՝ փողերի լվացման քրեականացումը, ֆինանսական հետախուզության մարմնի ստեղծումը, կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքումը և վերլուծությունը, միջազգային համագործակցության իրականացումը և այլն:

Փողերի լվացմանն առնչվող հանցանքների շարքին նշված կոնվենցիաները դասում են դիտավորյալ կատարված հետևյալ արարքները՝

- 1) գույքի փոխարկումը կամ փոխանակումը, եթե հայտնի է այդ գույքի հանցավոր եկամուտ հանդիսանալու փաստը՝ գույքի անօրինական ծագումը թաքցնելու կամ քողարկելու կամ նախորդող հանցանքի կատարման մեջ ներգրավված անձին իրավական հետևանքներից խուսափելու հարցում աջակցելու նպատակով,
- 2) գույքի իրական բնույթը, աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինումը, շարժը, գույքի նկատմամբ սեփականության կամ այլ իրավունքները թաքցնելը կամ քողարկելը, եթե հայտնի է այդ գույքի հանցավոր եկամուտ հանդիսանալու փաստը,
- 3) գույքի ձեռքբերումը, տիրապետումը կամ օգտագործումը, եթե ստանալու պահին հայտնի է եղել այդ գույքի հանցավոր եկամուտ հանդիսանալու փաստը,
- 4) նշված հանցանքներին մասնակցելը, դրանց կատարման համար համախմբվելը կամ համաձայնության գալը, հանցափորձը, ինչպես նաև այդ հանցանքների կատարմանն աջակցելը, դրդելը, նպաստելը կամ դրանք ուղղորդելը:

Փողերի լվացմանն առնչվող քրեական վարույթների քննության տեսանկյունից միջազգային պայմանագրերից բխում են նաև հետևյալ պահանջները՝

- Էական չպետք է լինի նախորդող հանցանքի՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների քննությանն ընդդատյա լինելը,

- Հանցակազմի սուբյեկտիվ տարրերի (իմացության, դիտավորության կամ նպատակի) վերաբերյալ եզրահանգումները կարող են արվել՝ գործի օբյեկտիվ, փաստական հանգամանքներից ելնելով,
- Նախորդող հանցանքի համար նախկինում կամ զուգահեռ դատապարտումը նախապայման չէ փողերի լվացման համար դատապարտելու համար,
- Գույքի հանցավոր ծագումն ապացուցելու համար չպետք է անհրաժեշտ լինի ճշգրիտ նշել այն հանցանքը, որի արդյունքում ստացվել է այդ գույքը:

*գ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Ստորև ներկայացված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշ որոշումներ, որոնք ուղղակիորեն առնչվում են փողերի լվացման գործերի քննությանը և կարող են օգտակար լինել առանձին հանգամանքների իրավական վերլուծության համար:

<b>Գործ թիվ 1</b>	
<b>Իրավական թեման</b>	Նույն արարքի համար կրկնակի պատասխանատվությունը
<b>Գործի անվանումը</b>	<a href="#">Ալվես դե Օլիվեյրա ընդդեմ Ֆրանսիայի</a> , 25.11.2021թ. (հասանելի է <a href="#">Ֆրանսերեն</a> )
<b>Դատարանի եզրահանգումները</b>	Դիմումատուն դատապարտվել էր կավատության և փողերի լվացման համար, մասնավորապես՝ վերջինս, տրամադրելով տարածքներ պոռնկությամբ զբաղվող անձանց, նրանցից վարձավճարները ստացել էր միայն կանխիկ եղանակով, որից հետո դրանք մուտք էր արել իր և իր ընտանիքի անդամների բանկային հաշիվներին՝ ստացված միջոցները միախառնելով իր՝ այլ աղբյուրներից ստացված եկամուտների հետ:

Դատարանը, քննարկելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Կոնվենցիա) 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտման առկայության հարցը, արձանագրել է, որ անձը դատապարտվել է նախ այն բանի համար, որ գիտակցելով պոռնկության ապօրինի բնույթը, իրեն պատկանող բազմաթիվ անշարժ գույքի միավորները տրամադրել է վարձակալների, որոնք այնտեղ զբաղվել են պոռնկությամբ, և մյուս կողմից այն բանի համար, որ նա այդ հանցանքի կատարումից ուղղակի կամ անուղղակի եղանակով կանխիկ ձևով ստացված եկամուտները ներդրել է, թաքցրել է կամ փոխարկել է Ֆրանսիայում կամ Պորտուգալիայում: Դատարանը եկել է եզրահանգման, որ միևնույն դատարանի կողմից այս արաքների համար միաժամանակյա դատապարտումը չի վերաբերում նույն փաստերին կամ այնպիսի փաստերի, որոնք բովանդակային առումով կարող են դիտարկվել որպես նույնական (պ. 26):

<b>Գործ թիվ 2</b>	
<b>Իրավական թեման</b>	Նախորդող հանցանքի ապացուցման պարտականությունը
<b>Գործի անվանումը</b>	<a href="#">Տիմոտեյանս քննչեն Բելգիայի</a> , 02.05.2017թ. (հասանելի է ֆրանսերեն)
<b>Դատարանի եզրահանգումները</b>	Դիմումատուն դատապարտվել էր փողերի լվացման համար, մասնավորապես՝ վերջինս, առանց համապատասխան լիցենզավորման, մատուցել էր փոխարկման ծառայություններ մոտ 12 միլիոն եվրոյին համարժեք միջոցների ներգրավմամբ՝ առավելապես մեկ հաճախորդի համար: Անձի դատապարտման համար դատարան չէին ներկայացվել տեղեկություններ այն հանցանքի մասին, որի կատարման արդյունքում ենթադրաբար ստացվել են միջոցները և որոնց ծագման աղբյուրը խեղաթյուրելու համար դիմումատուն իրականացրել էր նշված գործարքները:



Դատարանը, քննարկելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավունքների խախտման հարցը, արձանագրել է, որ մեղադրանքից արդյունավետ պաշտպանվելու համար բավարար էր այն գործարքների նկարագրությունը, որոնք հիմք էին հանդիսացել փողերի լվացման դեպքի առկայությունը հաստատելու համար: Կոնվենցիայից չի կարող բխել փողերի լվացման առարկա հանցավոր եկամուտների ծագման համար հիմք հանդիսացած բոլոր հանցանքների հստակեցման պահանջը: Այդ արարքները փողերի լվացման համար առաջադրված մեղադրանքի մաս չեն: Դատարանը եկել է եզրահանգման, որ դիմումատուն ունեցել է բավարար տեղեկություններ իրեն առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքերի վերաբերյալ (պ. 41-44):

<b>Գործ թիվ 3</b>	
<b>Իրավական թեման</b>	Ապացուցման անուղղակի մեթոդը
<b>Գործի անվանումը</b>	<a href="#">Չիյուսիենն ընդդեմ Բելգիայի</a> , 02.05.2017թ. (հասանելի է ֆրանսերեն)
<b>Դատարանի եզրահանգումները</b>	Դիմումատուն դատապարտվել էր փողերի լվացման համար, մասնավորապես՝ վերջինը երկու ամսվա ընթացքում իր բանկային հաշվին հինգ առանձին գործարքով կանխիկ եղանակով մուտք էր արել 75.000 եվրո: Ներպետական դատարանները արձանագրել էին, որ փողերի լվացման առարկա հանդիսացող միջոցների հանցավոր ծագումը հաստատելու համար անհրաժեշտ չէ նախորդող հանցանքի հստակեցումը, փոխարենը բավարար է բացառել միջոցների ծագման բոլոր հնարավոր օրինական աղբյուրները: Միջոցների հանցավոր ծագումը հաստատելու համար ներպետական դատարանները հղում են արել, ի թիվս այլնի, հետևյալ հանգամանքներին՝ դիմումատուն չի ներկայացրել միջոցների ծագման վերաբերյալ բացատրություններ, նա նախկինում կատարել է թմրանյութերի հետ կապված իրավախախտումներ, նա չի ունեցել որևէ հայտնի եկամտի

աղբյուր, որոշ դեպքերում բանկային հաշիվ միջոցները մուտք են արել անհայտ անձինք, մինչդեռ դիմումատուն սպասել է դրսում, հաշվին մուտք արվող կանխիկ թղթադրամները եղել են համեմատաբար փոքր արժեքներով, ինչը հատուկ է թմրանյութների իրացմանը:

Դատարանը, քննարկելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավունքների խախտման հարցը, արձանագրել է, որ այն հանգամանքը, որ ներպետական դատարանները եկամուտների հանցավոր ծագումը հաստատելու համար հաշվի են առել բացատրություններ ներկայացնելուց անձի հրաժարվելը, չի խախտում անձի լռելու իրավունքը: Կոնվենցիան չի արգելում հաշվի առնել անձի լռությունը նրան դատապարտելու համար, քանի դեռ դատապարտումը բացառապես կամ առավելապես հիմնված չէ անձի լռելու փաստի վրա: Տվյալ դեպքում ներպետական դատարանները հաստատելու համար անձի մեղավորությունը հիմք են ընդունել մի շարք փաստերի համակցություն, իսկ անձի լռությունը, այն պայմաններում, երբ իրավիճակից ենթադրվում էր հավելյալ պարզաբանումների անհրաժեշտություն, միայն ամրապնդել է արված եզրահանգումները (պ. 29): Դատարանը եկել է եզրահանգման, որ հետևությունները, որոնք արվել են՝ հիմք ընդունելով միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելուց անձի հրաժարվելու հանգամանքը, տրամաբանական են և չեն կարող որակվել որպես անարդար կամ ոչ ողջամիտ:

<b>Գործ թիվ 4</b>	
<b>Իրավական թեման</b>	Միջոցների հանցավոր ծագման վերաբերյալ ողջամիտ կասկածը
<b>Գործի անվանումը</b>	<a href="#">Պողեսկին ընդդեմ Սան Մարինոյի</a> , 13.04.2017թ. (հասանելի է անգլերեն)
<b>Դատարանի եզրահանգումները</b>	Դիմումատուին մեղադրանք էր առաջադրվել փողերի լվացման համար, մասնավորապես՝ վերջինս, նախկինում լինելով

պաշտոնատար անձ, կանխիկով կամ չեքով մեծ ծավալների գումարներ է մուտք արել միջանկյալ ընկերությունների հաշիվներին, որտեղից այդ միջոցները կանխիկացվել են, բաշխվել են այլ հաստատությունների միջև, որոնք բոլորը փոխկապակցված են մեղադրյալի հետ: Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը:

Դատարանը, քննարկելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավունքների խախտումը, արձանագրել է, որ դիմումատուի հիմնական բողոքը կայանում է նրանում, որ իրեն բացահայտված ապացույցները, որոնց հիման վրա դատարանը հաստատել է ողջամիտ կասկածի առկայությունը, բավարար չէին, քանի որ դրանք չէին հաստատում իրեն առաջադրված մեղադրանքի տարրերը, մասնավորապես՝ միջոցների հանցավոր ծագումը: Դատարանը նշում է, որ ինչպես պարզաբանել են ներպետական դատարանները, միջոցների հանցավոր ծագումը հաստատված լինելը անհրաժեշտ չէ փողերի լվացման կասկածի համար, բավարար էր ունենալ փաստական հանգամանքների ամբողջություն, որը վկայում է հնարավոր հանցանքի մասին, որից ծագել են եկամուտները: Տվյալ դեպքում, ի թիվս այլնի, գործի այդպիսի փաստական հանգամանք է մասնավորապես դիմումատուի կողմից ստացվող և տնօրինվող էական ծավալի գումարների շարժը, որը չի համապատասխանում վերջինիս օրինական եկամուտներին:

<b>Գործ թիվ 5</b>	
<b>Իրավական թեման</b>	Երրորդ անձանց գույքի բռնագրավումը
<b>Գործի համարը</b>	<a href="#">Վոյկուլեսկուն ընդդեմ Ռումինիայի</a> , 22.02.2022թ. (հասանելի է անգլերեն)
<b>Դատարանի եզրահանգումները</b>	Փողերի լվացման գործով դատապարտումից հետո դատարանը բռնագանձում էր տարածել նաև դատապարտված անձի երկու զավակների (տվյալ գործով դիմումատուների) և երկու

առևտրային կազմակերպության ակտիվների վրա՝ որպես հանցագործության արդյունքում ստացված եկամուտներ:

Դատարանը, քննարկելով Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման հարցը, արձանագրել է, որ չնայած դատապարտված անձի երեխաները չեն մասնակցել քրեական գործի քննությանը, սակայն հնարավորություն են ունեցել բողոքարկելու կայացված դատական ակտը: Բողոքի քննարկման շրջանակներում նրանց ընձեռնվել է բավարար հնարավորություն հերքելու գույքի հանցավոր ծագում ունենալը, իսկ ներպետական դատարանները բավարար պատճառաբանվածությամբ հերքել են դիմումատուների՝ այդ առնչությամբ ներկայացրած պնդումները (պ. 21): Դատարանը եզրահանգել է, որ դիմումատուներին տրվել է ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իրենց դիրքորոշումը և ներպետական դատարանի եզրահանգումները չեն կարող որակվել կամայական:

## 2. Ներպետական իրավունքը և դատական պրակտիկան

### ա. Ներպետական իրավական ակտերը

Փողերի լվացման հանցակազմը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով: Քննարկվող հանցակազմն ունի այլընտրանքային օբյեկտիվ կողմ, որը դրսևորվում է դիտավորությամբ կատարված հետևյալ գործողություններով.

- 1) հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ
- 2) գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ

3) գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Կարևոր է նշել, որ փողերի լվացման համար պատասխանատվության կարող է ենթարկվել ինչպես այն անձը, որը կատարել է նախորդող հանցանքը և այնուհետև օրինականացրել է իր իսկ կատարած հանցանքի արդյունքում ձևավորված հանցավոր գույքը, այնպես էլ՝ անձը, որը չի կատարել նախորդող հանցանք և օրինականացրել է այլ անձի կատարած հանցանքի արդյունքում ձևավորված հանցավոր գույքը (օրինակ՝ որպես մասնագիտացված ծառայություն):

Արարքը փողերի լվացում որակելու հիմքում ընկած են հետևյալ երկու նախապայմանները. հանցակազմի մաս կազմող գործողությունները կատարվում են՝ գիտակցելով գույքի՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու հանգամանքը, և կատարվող գործողությունները հետապնդում են գույքի հանցավոր ծագումը թաքցնելու, խեղաթյուրելու, քողարկելու կամ հանցանքը կատարած անձին պատասխանատվությունից խուսափելու հարցում օժանդակելու նպատակ:<sup>1</sup>

Այսպիսով՝ փողերի լվացման հանցանքը կատարվում է **դիտավորությամբ** և հանցակազմի պարտադիր մաս են կազմում անձի որոշ հանգամանքների **իմացությունը** և որոշակի **նպատակ** հետապնդելը: Ինչպես արդեն նշվել է, միջազգային լավագույն փորձից բխում է և միջազգային պայմանագրերում ամրագրում է ստացել այն մոտեցումը, որ իմացության, դիտավորության կամ նպատակի վերաբերյալ եզրահանգումները կարող են արվել՝ գործի օբյեկտիվ, փաստական հանգամանքներից ելնելով:

Հանցագործության առարկա են ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված օբյեկտները, մասնավորապես՝ ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ ֆինանսական (դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

---

<sup>1</sup> Հանցակազմի մաս կազմող երրորդ գործողության համար օրենսդիրը չի ամրագրել նպատակի առկայության նախապայման, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ թիվ ԵԿԴ/0090/01/09 գործով 2011 թվականի փետրվարի 24-ին կայացված որոշմամբ եզրահանգել է, որ նպատակի բացակայությունը կարող է որոշ դեպքերում հանցակազմը նույնացնել հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելու հանցակազմի հետ, հետևաբար նպատակի առկայությունը կազմում է փողերի լվացման հանցակազմի պարտադիր մաս:

Հաշվի առնելով փողերի լվացման գործերով քննության ընթացքում հիմնական հասկացությունների սահմանված չլինելու հետ կապված իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրները և ՀՀ տարածքում փողերի լվացմանը հակազդելու իրավական կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությունը՝ 2008 թվականի մայիսի 26-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենք): Օրենքը սահմանում է դրանում օգտագործվող հիմնական հասկացությունները, հաշվետվություն տրամադրող անձանց ցանկը, լիազորված մարմնի լիազորությունները և գործառույթները, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության իրականացման դեպքերը, գործարար հարաբերությունում հաճախորդի գործարար բնութագրի պարզման և գործարար հարաբերությունների ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կարգը, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցման վերաբերյալ դրույթները, դրամական փոխանցումների հետ կապված պարտավորությունները, կարգավորում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հետ կապված հարաբերությունները և այլն:

#### *բ. Ներպետական դատական պրակտիկան*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի ուժով՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները, իսկ դատարանը պարտավոր է անդրադառնալ վկայակոչված իրավական փաստարկներին: Ըստ որում, նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունների դեպքում, եթե դատարանը որոշում է առաջնորդվել այլ մեկնաբանությամբ, վերջինս պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

Ստորև ներկայացված են Վճռաբեկ դատարանի որոշումներ, որոնք ուղղակիորեն առնչվում են փողերի լվացման գործերի քննությանը և կարող են օգտակար լինել առանձին հարցերով իրավական վեճի առկայության պայմաններում:

#### **Գործ թիվ 1**

<b>Իրավական թեման</b>	Նպատակը՝ որպես փողերի լվացման հանցակազմի պարտադիր մաս
<b>Գործի համարը</b>	Քրեական գործ թիվ <a href="#">ԵԿԴ/0090/01/09</a> , 24.02.2011թ.
<b>Դատարանի եզրահանգումները</b>	<p>Ա. Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել էր ընդհանուր առմամբ 17.163.000 ՀՀ դրամին համարժեք գումար և այն փոխանցել էր իր կողմից հիմնադրված «ԷյԹիԷյ մոբայլ» ՍՊԸ-ի՝ «Ինեկորանկ» ՓԲԸ-ում բացված հաշվեհամարին՝ միաժամանակ այդ գործարքները ձևակերպելով իբրև վաճառասրահից իրացված ապրանքի դիմաց վճարում՝ դրանով իսկ խեղաթյուրելով գողոնի իրական բնույթը և ծագման աղբյուրը:</p> <p>Տվյալ գործով, անդրադառնալով հանցակազմի մաս կազմող «(...) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)» գործողությանը, նշել է, որ. «(...) տառացի մեկնաբանության արդյունքում ստացվում է, որ եթե անձը հանցագործության արդյունքում ստացված միջոցները ձեռք է բերում և օգտագործում է իր անձնական կարիքները բավարարելու համար, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի վերոնշյալ պայմանի ուժով մեխանիկորեն դառնում է քննարկվող հանցագործության սուբյեկտ: Նման մոտեցումը չի համապատասխանում գույքի օրինականացման էությանը, քանի որ տվյալ պարագայում բացակայում է այն «լվանալուն» ուղղված դիտավորությունը: Այլ կերպ՝ անձը դիտավորություն չի ունեցել օրինական շրջանառության մեջ դնել հանցավոր ճանապարհով ստացված միջոցները, այլ ընդամենը ցանկացել է օգտվել դրանցից, քանի որ ի վերջո հանցագործությունը կատարվել է հենց այդ միջոցները ձեռք բերելու և դրանցից օգտվելու նպատակով: Այս դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիան օբյեկտիվ կողմից կարող է համընկնել հանցագործության օժանդակության հետ, եթե</p>

	<p>գույքի ձեռքբերումը եղել է նախապես խոստացված, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի դիսպոզիցիայի հետ, եթե գույքի ձեռքբերումը նախապես խոստացված չի եղել: Մինչդեռ տվյալ դեպքում անձը հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքի հետ կապված բոլոր գործողությունները կատարում է մեկ դիտավորությամբ, այն է՝ համապատասխան միջոցների ծագման իրական աղբյուրը քողարկել կամ խեղաթյուրել և դրանց հաղորդել օրինական տեսք:» (կետ 15):</p>
--	--

<b>Գործ թիվ 2</b>	
<b>Իրավական թեման</b>	Փողերի լվացման հանցակազմի ինքնավարությունը և հանցակազմի տարր կազմող նպատակի գնահատումը
<b>Գործի համարը</b>	Քրեական գործ թիվ <a href="#">ԵԿԴ/0161/01/15</a> , 07.11.2019թ.
<b>Դատարանի եզրահանգումները</b>	<p>Հ. Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Մշո-Լայֆ» ՍՊԸ հիմնադիրն ու տնօրենը, չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց: Գույքի հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով գումարները «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ի բանկային հաշվից փոխանցվել են «Չանախյան» ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարին՝ որպես ապրանքների դիմաց վճարում: Գումարը, փոխանցումներ կատարելու կամ դրան հաջորդող օրերին «Չանախյան» ՍՊԸ-ի գործունեության համար անհրաժեշտ ծախսեր կատարելու կեղծ հիմնավորմամբ, Հ. Չանախյանի կողմից կանխիկացվել և առձեռն տրվել է Հ. Գևորգյանին: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված գործողություններում առկա չէ հանցավոր գույքի աղբյուրը թաքցնելու կամ խեղաթյուրելու նպատակ:</p> <p>Անդրադառնալով, հանցավոր գույքի ծագման աղբյուրը թաքցնելու նպատակի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի փաստական հանգամանքները, հատկապես հանցավոր գույքի ձևավորումից հետո դրա շարժը և դրա վերադարձը Հ.</p>



	<p>Գևորգյանին, պատշաճ վերլուծության չեն ենթարկվել և հետևաբար գույքի հանցավոր ծագումը թաքցնելու նպատակի բացակայության վերաբերյալ եզրահանգումները չեն կարող փաստարկված լինել: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործի փաստական հանգամանքների վերլուծությունը «առանցքային նշանակություն» ունի փողերի լվացման հանցակազմի տարրերի, այդ թվում՝ նպատակի առկայության կամ բացակայության հաստատման համար: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ հանցավոր ծագում ունեցող գույքի շարժին առնչվող ամբաստանյալների գործողությունները դուրս են փողերի լվացմանը նախորդող արարքների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածների քրեաիրավական որակումներից և պետք է արժանանային ինքնուրույն իրավական գնահատականի (կետ 18):</p>
--	---

<b>Գործ թիվ 3</b>	
<b>Իրավական թեման</b>	Նախորդող հանցանքի հաստատման պարտականությունը և ապացուցման անուղղակի մեթոդը
<b>Գործի համարը</b>	Քրեական գործ թիվ <a href="#">ԵԷԴ/0054/01/15</a> , 14.04.2021թ.
<b>Դատարանի եզրահանգումները</b>	<p>Ա. Սուքիասյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ վերջինս խարդախությամբ ուրիշի գույքի նկատմամբ ձեռք էր բերել իրավունքներ և հանցավոր ճանապարհով՝ խաբեությամբ ստացված եկամուտների ծագման աղբյուրը խեղաթյուրելու նպատակով իրականացրել էր բանկային փոխանցումներ, փոխարկում, թանկարժեք մետաղների ձեռքբերումներ: Վերաքննիչ դատարանը, քննարկելով խարդախության հանցակազմի բացակայության հարցը, նշել է որ դրա բացակայության պայմաններում քրեական գործով ապացուցված չի կարող համարվել նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:</p>

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ նախորդող հանցագործության համար դատապարտման բացակայությունը չի կարող մեխանիկորեն բացառել փողերի լվացման համար դատապարտումը և դատարանը պետք է առանձին վերլուծության ենթարկի նշված հանցակազմի առկայության հարցը:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով միջազգային և ներպետական ակտերը, մասնավորապես նշել է. « (...) փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի հանցավոր ծագումը հաստատելու համար անհրաժեշտ չէ ոչ միայն նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայություն, այլև տվյալ գույքի հանցավոր ծագման փաստը կարող է հաստատվել՝ անկախ նախորդող հանցագործության՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված լինելու պայմանից: Տվյալ դեպքում բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում գալու ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ունի հանցավոր ծագում: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի փաստական տվյալների ներկայացում, որոնք ողջամտորեն կվկայեն փողերի լվացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին: (...) Ընդ որում, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ ճշգրիտ կերպով վկայակոչել և նկարագրել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն կոնկրետ հանցակազմը, որի արդյունքում ստացվել է ապօրինի գույքը, այլ բավարար է տալ միայն որևէ հանցավոր արարքի ընդհանրական նկարագրությունը (օրինակ՝ գույքը ստացվել է հափշտակությունների, թրաֆիքինգի, թմրամիջոցների կամ զենքի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության այս կամ այն դրսևորման կամ այլ հանցագործության արդյունքում): (կետ 22)»:

# Գլուխ 2. Մինչդատական վարույթի առանձնահատկությունները

## 1. Քրեական վարույթի նախաձեռնումը և քննության պլանավորումը

### *ա. Քրեական վարույթի նախաձեռնումը*

Գործող քրեադատավարական կարգավորումներից հետևում է, որ առերևույթ հանցագործության մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պարտավոր է կազմել քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն և ձեռնամուխ լինել համակողմանի նախաքննության կատարմանը: Փողերի լվացման հանցակազմով քրեական վարույթ նախաձեռնելու հարցի սեղմ ժամկետում լուծումը հնարավորություն է տալիս առանց հապաղումների, քրեադատավարական ողջ գործիքակազմի կիրառմամբ, այդ թվում՝ գաղտնի քննչական գործողությունների իրականացմամբ, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ համակողմանի նախաքննություն իրականացնելու համար:

Պետք է նշել, որ փողերի լվացման հանցակազմով քրեական վարույթ նախաձեռնելն ունի որոշ առանձնահատկություններ: Թեև փողերի լվացման հանցակազմն ունի ինքնավար բնույթ, սակայն հանցակազմի քրեաիրավական բնորոշումից հետևում է, որ նշված հանցանքի մասին խոսք կարող է լինել, եթե առկա է նախորդող հանցանք: Հետևաբար, քննարկվող հանցագործության դեպքերով քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելիս, առաջին հերթին, անհրաժեշտ է գնահատել նախորդող հանցանքի առկայությունը:

Գործնականում քրեական վարույթ նախաձեռնելու փուլում փողերի լվացման հանցակազմերով նախորդող արարքների գնահատումը կատարվում է տարբեր չափանիշներով՝ ընդհուպ մինչև ամենաբարձր շեմի փաստերի գնահատման եղանակով: Քրեական վարույթ նախաձեռնելու փուլում անհրաժեշտ է նախորդող հանցագործության օբյեկտիվ կողմի նվազագույն հատկանիշների (ամենացածր շեմի) մասին վկայող տվյալներ: Տվյալ դեպքում բավարար է հաղորդման մեջ շարադրված փաստերի, այդ թվում՝ անուղղակի, իսկ եթե առկա են հաղորդմանը կից նյութեր, նաև այդ նյութերի համադրման արդյունքում գալ **ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքը ենթադրաբար ունի հանցավոր ծագում**: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի նվազագույն փաստերի առկայություն, որոնք

ողջամտորեն կվկայեն փողերի լվացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին:

Ընդ որում, քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրության մեջ առերևույթ հանցանքի փաստական նկարագրությունը ձևակերպելիս, պարտադիր չէ ճշգրիտ կերպով վկայակոչել և նկարագրել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն կոնկրետ հանցակազմը, որի արդյունքում ստացվել է գույքը, այլ բավարար է տալ միայն նախորդող որևէ հանցավոր արարքի ընդհանրական, կրկին նվազագույն չափանիշների համատեքստում, նկարագրությունը:

Այսպիսով, փողերի լվացման հանցագործության դեպքերով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված աղբյուրից պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում, քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելիս, փողերի լվացմանը նախորդող հանցանքի (հանցանքների) առկայությունն անհրաժեշտ է պատշաճ գնահատման ենթարկել վերը նշված չափանիշների տեսանկյունից: Հակառակ մոտեցումը չի բխի ինչպես քրեական վարույթ նախաձեռնելու փուլի խնդիրներից, այնպես էլ՝ փողերի լվացման դեմ պայքարի՝ պետությունների ստանձնած միջազգային պարտավորություններից:

#### *բ. Քննության պլանավորումը*

Հանցագործությունների քննության պլանավորումը հիմնականում կրում է միատեսակ բնույթ, այնուամենայնիվ, յուրաքանչյուր առանձին հանցագործություն, այդ թվում՝ յուրաքանչյուր հանցատեսակի առանձին դրսևորում պահանջում են լրացուցիչ տակտիկայի կիրառում: Քննության պլանավորման մանրամասների մասին կարելի է տեղեկություններ ստանալ օրինակ [ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. թիվ 13 հրամանի](#) հավելվածին կցված բացատրական նյութից:

Առանձին դեպքերում օգտակար է ուշադրություն դարձնել քննչական տակտիկայի կիրառման որոշ նրբությունների, օրինակ՝ սկզբում հարցաքննության հրավիրել իրավապահ մարմինների հետ առավել համագործակցային տրամադրված վկաներին, վերջինների հարցաքննության արդյունքում ձեռք բերված տեղեկություններն օգտագործել քիչ համագործակցային վկաներից հնարավոր տեղեկությունների ստացման համար, կամ հանցագործության քննության շրջանակներում առավելապես առաջնորդվել հանցագործության կատարման մեջ կասկածվող անձին հնարավորին ուշ հարցաքննելու մեթոդով և այլն:

Ինչ վերաբերում է փողերի լվացմանը, դրա մասին վկայող հանգամանքները, որպես կանոն, ի հայտ են գալիս դրան նախորդող հանցագործությունների քննության ընթացքում կամ հակառակը՝ փողերի լվացման վերաբերյալ նախաքննության

ընթացքում բացահայտվում է դրան նախորդող հանցագործությունը, որի արդյունքում ստացվել է հանցավոր գույքը:

Քննության պլանավորման առանցքային մասն է կազմում վարկածի առաջադրումը. գույք առաջացնող հանցագործությունների քննության պլանավորման ընթացքում անհրաժեշտ է որպես վարկած առաջ քաշել փողերի լվացման հնարավոր հանգամանքը և սահմանել դրա հաստատմանը կամ հերքմանն ուղղված կոնկրետ գործողությունները, դրանց կատարման հաջորդականությունն ու ժամկետները: Գույք առաջացնող հանցագործությունները շատ տարաբնույթ են, սակայն կա հանցագործությունների որոշակի շրջանակ, որոնք առավել հաճախ են նախորդում փողերի լվացմանը: Այս առումով, կարևոր է իրավապահ մարմինների՝ երկրում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման [նիսկերի ազգային գնահատման արդյունքներին](#) ծանոթ լինելը՝ ինչպես առավել բարձր սպառնալիք ներկայացնող նախորդող հանցագործությունների, այնպես էլ փողերի լվացման սխեմայի իրագործման համար առավել տարածված մեթոդներին ծանոթ լինելու նպատակով:

**Այսպիսով, բոլոր այն հանցագործությունների դեպքերով, որոնք ենթադրում են հանցավոր եկամուտի ստացում, փողերի լվացման հանգամանքը պետք է դարձնել քննության առարկա և այդ ուղղությամբ ևս կատարել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:**

Կարևոր է նշված վարկածների առաջադրման ժամանակ քննություն իրականացնող մարմինների համագործակցությունը օպերատիվ-հետախուզական, ֆինանսական հետախուզության, հարկային և մաքսային մարմինների, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ:

Նախորդող հանցագործությունների քննության ընթացքում նշված մարմինների հետ համագործակցության արդյունքում ստացված տեղեկությունները կարող են հիմք հանդիսանալ փողերի լվացման վարկածի առաջադրման և հետագայում դրա հաստատման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:

Ընդ որում, նախորդող հանցագործությունների քննության ընթացքում փողերի լվացման վարկածի առաջադրումը կարող է հանգեցնել քրեական վարույթը, ըստ քննչական ենթակայության կանոնների, այլ մարմնի փոխանցելու անհրաժեշտության: Նշվածի համատեքստում, ֆինանսական հանցագործությունների քննության ընթացքում կարևոր է հատկապես քննիչի և հսկող դատախազի կողմից ենթադրյալ հանցանքի նկարագիրը կամ տրված իրավական գնահատականը շտկելու, ինչպես նաև նոր հանցագործության հատկանիշներով քրեական վարույթ նախաձեռնելու անհրաժեշտության պարբերական գնահատումը, մասնավորապես՝ փողերի լվացման հանցակազմի առկայության մասով:

## 2. Ֆինանսական քննության իրականացումը

### ա. Չուգահեռ ֆինանսական քննության հասկացությունը

Ֆինանսական քննությունը պետք է կազմի ինչպես փողերի լվացման, այնպես էլ նախորդող հանցագործությունների քննության պլանավորման անբաժանելի մաս, քանի որ ֆինանսական հանցագործությունների քննությունը չի կարող լինել ամբողջական առանց ակտիվների շարժի և դրանք տիրապետող անձանց գույքային դրության վերաբերյալ բավարար տեղեկությունների հավաքման:

Չուգահեռ քննությունն իրենից ներկայացնում է փողերի լվացման կամ նախորդող հանցագործության գծով (ավանդական) քրեական նախաքննությունից զատ կամ դրա համատեքստում իրականացվող ֆինանսական քննություն: Այն ենթադրում է, որ քննությունն իրականացնող մարմինը զուգահեռաբար կենտրոնանում է նախորդող և փողերի լվացման հանցակազմերի վրա:

Միջազգային չափանիշներից բխում է, որ իրավապահ մարմինները պետք է նախաձեռնողական կերպով իրականացնեն փողերի լվացման և նախորդող հանցանքների միաժամանակյա քննություն:<sup>2</sup> Ֆինանսական քննությունը կարող է ենթադրել մեծ ծավալով տվյալների հավաքում և վերլուծություն, որպեսզի.

- **պարզվի հանցագործության տարածման աստիճանը և/կամ քրեական ցանցերի գործունեության շրջանակը,**
- **հայտնաբերվեն և հետապնդվեն այն ակտիվները, որոնք ենթակա են կամ կարող են ենթակա դառնալ բռնագրավման,**
- **հավաքվեն ապացույցներ, որոնք կարող են օգտագործվել քրեական վարույթի շրջանակներում:**

Չուգահեռ ֆինանսական քննությունը նախ թույլ է տալիս ապահովել, որ նախորդող հանցանքի կատարման արդյունքում ստացված միջոցները հայտնաբերվեն հնարավորինս կարճ ժամկետներում և կանխվեն դրանք այլ հանցանքի կատարման համար օգտագործելու կամ դրանց ծագումը թաքցնելու փորձերը: Հանցագործությունից ստացված եկամուտների հայտնաբերման և բռնագրավման արդյունավետության

---

<sup>2</sup> Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) հանձնարարականներ (2012), Հանձնարարական թիվ 30 («...մարմինները պետք է առնվազն հանցավոր ճանապարհով ստացված գույք առաջացնող բոլոր հիմնական հանցագործությունների դեպքում փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերով քրեական հետապնդում իրականացնելիս նախաձեռնողական կերպով կատարեն զուգահեռ ֆինանսական քննություն: Սա պետք է ներառի այն դեպքերը, երբ նախորդող հանցագործությունը կատարվել է տվյալ երկրի տարածքից դուրս:»):

բարձրացումն իրա հերթին նվազեցնում է ֆինանսական հանցագործությունների գրավչությունը և նպաստում է հանցագործությունների կանխարգելմանը:

Ավելին, փողերի լվացումը հաճախ կազմում է էական ծավալի ֆինանսական օգուտներ առաջացնող հանցանքների կատարման տրամաբանական շարունակություն, քանի որ հանցանքը կատարած անձի մոտ առաջանում է ստացված միջոցներից օգտվելու ցանկություն: Համապատասխանաբար, զուգահեռ ֆինանսական քննությունը կարող է նաև նպաստել, որ բացահայտվի հանցանքի կատարման ամբողջական շղթան և պարզվեն բոլոր հանցակիցները, ինչը հատկապես կարևոր է կազմակերպված հանցավորության դեմ պայքարում:

Ջուզահեռ ֆինանսական քննությունը կարող է նպաստել նաև այնպիսի հանգամանքների բացահայտմանը, որոնք կարող են ներառվել նախորդող հանցանքին առնչվող ապացույցների ծավալում, օգտագործվել որպես այլ հանցակազմի առկայության մասին վկայող տարրեր (օրինակ՝ ապօրինի հարստանալը) կամ հետագայում օգտագործվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կամ պետությանը պատճառված վնասի հատուցման հայց ներկայացնելու համար:

#### *բ. Ջուզահեռ ֆինանսական քննության ուղղությունները*

Ֆինանսական քննության նպատակով իրականացվելիք գործողությունները պետք է կազմեն գործի քննության պլանավորման մաս: Գործի քննությունը պետք է զուգահեռաբար նպատակ ունենա ինչպես հավաքելու բավարար ապացուցողական բազա հանցակազմի բոլոր տարրերի առկայությունն ապացուցելու համար, այնպես էլ հայտնաբերելու հանցավոր ծագում ունեցող գույքը դրա հետագա բռնագրավումն ապահովելու նպատակով:

**Հանցավոր եկամուտների ձևավորման և դրանց հետագա ճակատագրի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ ֆինանսական հանցագործությունների համակողմանի քննությունն ապահովելու տեսանկյունից: Ֆինանսական շարժերի ամբողջական շղթայի բացահայտումը և անձանց վարքագծի ուսումնասիրությունը կարող են էական նշանակություն ունենալ հանցակազմի տարբեր տարրերի, այդ թվում՝ հանցակազմի սուբյեկտիվ կողմի ապացուցման տեսանկյունից:**

Այդպես հանցակազմի սուբյեկտիվ տարրերի առկայությունը կարող է ապացուցվել քննությամբ բացահայտված փաստական տվյալների հիման վրա: Օրինակ՝ այն հանգամանքը, որ անձը դիմել է փախուստի, այն բանից հետո, երբ մաքսային մարմնի աշխատակիցը հետաքրքրվել է գույքի ծագման աղբյուրի վերաբերյալ, կարող է օգտագործվել ապացուցելու համար, որ անձը գիտակցել է գույքի հանցավոր ծագում

ունենալու հանգամանքը: Մեկ այլ դեպքում, անձի կողմից առանց որևէ ողջամիտ տնտեսական նպատակ հետապնդելու մեծ գումարների գործարքների կատարումը դեպի օտարերկրյա բանկային հաշիվներ կարող է օգտագործվել անձի՝ գույքը թաքցնելու կամ դրա ծագման աղբյուրը խեղաթյուրելու նպատակի ապացուցման համար:

Պետք է հաշվի առնել նաև, որ անուղղակի ապացույցները նույնպես կարող են էական նշանակություն ունենալ փողերի լվացման հանցակազմի տարրերի ապացուցման տեսանկյունից:<sup>3</sup> Գույքի հանցավոր ծագումն օրինակ կարող է ապացուցվել՝ օգտագործելով անձի օրինական եկամուտների և գույքի կամ նրա ապրելակերպի միջև առկա էական անհամապատասխանությունները, անձի կապը հանցավոր խմբավորումների հետ, անձի կողմից գույքի ծագման վերաբերյալ ողջամիտ բացատրություններ ներկայացնելուց հրաժարվելը և այլն:

Նշված հանգամանքները բացահայտելու համար գործի քննության պլանավորման ընթացքում պետք է հաշվի առնել ֆինանսական բնույթի տեղեկություններ հավաքելու անհրաժեշտությունը, դրանց ստացման հնարավոր աղբյուրները, անհրաժեշտ քննչական գործողությունների ցանկը և դրանց կատարման առավել նպատակահարմար պահը:

Ստորև ներկայացված են քայլեր, որոնք կարող են օգտակար լինել փողերի լվացման և նախորդող ֆինանսական հանցագործությունների զուգահեռ ֆինանսական քննության ընթացքում:

### **Քայլ 1. Ֆինանսական հոսքերը**

Ֆինանսական քննության անմիջական նպատակն է այնպիսի ապացույցների հավաքումը, որոնք հաստատում են ակտիվների և հանցանքի միջև կապի առկայությունը կամ հանցանքի արդյունքում ստացված եկամուտների ծավալը: Նշված նպատակին հնարավոր է հասնել հետևելով ակտիվների շարժին, ինչն առավել բարդ գործերով հաճախ ներառելու է բազմաթիվ գործարքներ, այդ թվում՝ արտերկրում գործող բանկային հաշիվներին և միջնորդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անունով իրականացված փոխանցումներ:

Ֆինանսական հոսքերի մասին տեղեկություններ կարող են պարունակել օրինակ անձի բանկային հաշիվների քաղվածքները, հաշվապահական փաստաթղթերը, հարկային հաշվետվությունները, հայտարարատու անձանց հայտարարագրերը:


Տեղեկությունների հավաքման և համադրման արդյունքում օգտակար է կազմել հետաքրքրություն ներկայացնող միջոցների ֆինանսական հոսքերի սխեմա, որտեղ

---

<sup>3</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշումը թիվ ԵԷԴ/0054/01/15 քրեական գործով, 14.04.2021թ., կետ 22.



կարող են լրացվել նաև հավելյալ վերաբերելի տեղեկություններ (օրինակը՝ ստորև պատկերում):<sup>4</sup>



## Քայլ 2. Հետաքրքրություն ներկայացնող անձանց շրջանակը


Ֆինանսների շարժին հետևելու արդյունքում կարող է բացահայտվել նաև գործի համար հետաքրքրություն ներկայացնող անձանց լայն շրջանակ: Անձինք, որոնք տիրապետում են կամ ինչ-որ պահի տիրապետել են հանցավոր ակտիվների, վերահսկում են ակտիվները տիրապետող իրավաբանական անձը կամ որոնք հանդես են եկել ակտիվները տիրապետող անձանց անունից, կարող են քննության արդյունքում ներգրավվել որպես հանցակիցներ: Նշված անձանց բացահայտումը և նրանց գործողությունների ուսումնասիրությունը կարող է վկայել նաև հանցավոր կազմակերպության առկայության մասին: Ընդ որում, հանցանքի կատարման ամբողջական պատկերը ստանալու համար կարևոր է հստակեցնել ինչպես գործի համար նշանակություն ունեցող անձանց շրջանակը, այնպես էլ նրանց փոխկապակցվածությունը:

Ֆիզիկական անձանց նույնականացումը և նրանց փոխկապակցվածությունը կարող է բացահայտվել քաղաքացիական կացության ակտերի գրանցման ռեգիստրի և բնակչության պետական ռեգիստրի, ինչպես նաև բաց աղբյուրների, այդ թվում՝ սոցիալական կայքերի ուսումնասիրության արդյունքում:

<sup>4</sup> Սխեմաները կազմվել են օգտագործելով Microsoft Office Visio ծրագիրը.

Իրավաբանական անձանց մասնակիցների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ կարող են բացահայտվել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, արժեթղթերի ռեեստրների, ֆոնդային բորսաների կայքերի, իրական շահառուների ռեգիստրների ուսումնասիրության արդյունքում: Իրավաբանական անձանց մասնակիցների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստացվել նաև առևտրային բանկերից, ինչը հատկապես օգտակար է, եթե խոսքը գնում է օտարերկրյա կազմակերպության մասին, որը Հայաստանում ունի բանկային հաշիվ:

Տեղեկությունների հավաքման և համադրման արդյունքում կարող է կազմվել հետաքրքրություն ներկայացնող անձանց ցանկ, վերջինների փոխկապակցվածության մասին և այլ վերաբերելի տվյալներով (օրինակը՝ ստորև պատկերում):



### Քայլ 3. Անձնական տեղեկությունները և ֆինանսական դրությունը

Գործի համար նշանակություն ունեցող անձանց շրջանակը պարզելուց հետո կարևոր է հավաքել նրանց անձնական կյանքի, այդ թվում՝ աշխատանքային և ընտանեկան կարգավիճակի, ինչպես նաև ֆինանսական դրության վերաբերյալ տեղեկություններ: Հավաքված տվյալների վերլուծությունը կարող է օգտակար լինել հանցագործության ամբողջական շղթան, ինչպես նաև անձանց մտադրությունները և շահագրգռվածությունը պարզելու համար:

Անձանց աշխատանքային պատմության վերաբերյալ տեղեկություններ կարող են ստացվել օրինակ հարկային և սոցիալական ապահովության մարմիններում առկա տվյալների բազաներից:

Անձանց եկամուտների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստացվել հարկային մարմիններից, նոտարներից (օրինակ՝ ժառանգություն կամ նվիրատվությամբ ստացված եկամուտներ), բանկերից, գույքային իրավունքների գրանցում իրականացնող մարմիններից (օրինակ՝ անշարժ գույքի կամ բաժնեմասի վաճառքից ստացվող եկամուտներ) և այլն:

Անձանց ծախսերի վերաբերյալ տեղեկություններ կարող են ստացվել օրինակ բանկերից և ծառայություններ մատուցող կազմակերպություններից (օրինակ՝ տուրիստական կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, փաստաբանական ընկերություններ և այլն):

Անձանց գույքի վերաբերյալ տեղեկություններ կարող են ստացվել նոտարներից, գույքի նկատմամբ իրավունքների գրանցում իրականացնող մարմիններից, հաշիվների սպասարկում իրականացնող, գույքի պահառություն իրականացնող կազմակերպություններից և այլն: Պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների գույքային դրության վերաբերյալ տեղեկություններ կարող են ստացվել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տվյալների բազայից:

Անձի գույքային և անձնական տվյալները հետաքրքրող ժամանակահատվածի համար կարող են անձանց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի վերաբերյալ փաստաթղթում՝ հետագա վերլուծության և համադրման համար:

Հաշվի առնելով հավաքվելիք տեղեկությունների մեծ ծավալը, ինչպես նաև հանցագործության բազմադրվագ դրսևորումը՝ նպատակահարմար է ի սկզբանե պլանավորել հավաքվելիք տեղեկությունների վերաբերելի ժամանակահատվածը, դրա շրջանակը: Օրինակ, հաճախ հանցադեպի մասին հավաքվում է շուրջ 20 տարվա վաղեմության տեղեկություն, ընտրվում է տեղեկությունների տեսակների չափազանց լայն շրջանակ, որը շեղում է քննության ուղղությունն ու պահանջում անհարկի ռեսուրսներ: **Առավել արդյունավետ կարող է լինել տեղեկությունների փուլային ձեռքբերումը, վերլուծության հիման վրա տեղեկությունների ծավալի ու շրջանակի ընդլայնումը:**

#### **Քայլ 4. Տեղեկությունների վերլուծությունը**

Հավաքված ֆինանսական տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս համադրել և համեմատել գույքի ստացման և փոխանցման ամսաթվերը, դրա ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները, կատարված գործարքների բնույթը և դուրս բերել առկա բացերը և անհամապատասխանությունները: Օրինակ՝ տվյալների

ուսումնասիրությունը կարող է ցույց տալ գումարի կանխիկացում մեկ անձի կողմից՝ առանց դրա հետագա ճակատագրի մասին տեղեկությունների, իսկ մեկ այլ անձի վերաբերյալ հավաքված տեղեկությունները ցույց տան նույն ծավալով գումարի մուտք հաշվին առանց ծագման աղբյուրի վերաբերյալ տվյալների: Այս բնույթի վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ նոր վարկածների առաջադրման և ապացուցողական գործողությունների ձեռնարկման համար:

Հավաքված տեղեկությունները կարող են վերլուծության ենթարկվել նաև զուտ ակտիվների ծավալը վեր հանելու նպատակով՝ մասնավորապես համադրելով անձի եկամուտները վերջինի ծախսերի և գույքի հետ: Նշված վերլուծության արդյունքում դուրս բերված անհամապատասխանությունները կարող են վկայել հանցավոր գույքի առկայության մասին և հիմք հանդիսանալ հետագա ապացուցողական գործողությունների կատարման համար: Նշված հանգամանքը կարող է օգտագործվել նաև փողերի լվացման հանցակազմի տարրերի ապացուցման համար:

Փողերի լվացման կամ կոռուպցիան սխեմաների առկայությունը պարզելու համար կարող է օգտակար լինել նաև վեր հանված գործարքների հատկանիշների համադրումը ՖԴԿ-ի կամ միջազգային մարմինների կողմից հրապարակված տիպաբանությունների և ազդակների հետ: Նշված փաստաթղթերը ամրագրում են փողերի լվացման նպատակ ունեցող անձանց վարքագծին հատուկ ազդակները, ինչպես նաև փողերի լվացման համար հաճախ օգտագործվող սխեմաները: Հայտնաբերված համընկնումները կարող են հիմք հանդիսանալ հավելյալ գործողությունների ձեռնարկման համար՝ հանցագործության ամբողջական պատկերը ստանալու նպատակով:

# Գլուխ 3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի և իրավապահ մարմինների համագործակցությունը

## 1. Ֆինանսական հետախուզության մարմինների դերը և գործառույթները

*ա. Ֆինանսական հետախուզության մարմինների դերը փողերի լվացման դեմ պայքարում*

Ֆինանսական հետախուզության մարմիններ (ՖՀՄ) հիմնադրելու պարտականությունն ամրագրված է մի շարք բազմակողմ միջազգային պայմանագրերում: Երկրների միջազգային պարտավորություններից բխում է այնպիսի մարմնի ստեղծումը, որն ունի հասանելիություն ֆինանսական բնույթի, ինչպես նաև վարչական և իրավապահ մարմինների կողմից տնօրինվող տեղեկությունների և հանդիսանում է փողերի լվացման հնարավոր դեպքերի վերաբերյալ տեղեկությունների հավաքման, վերլուծության և տրամադրման ազգային կենտրոն:

ՖՀՄ-ները միջանկյալ օղակ են մի կողմից՝ ֆինանսական հաստատությունների և հաշվետվություն տրամադրող այլ անձանց, մյուս կողմից՝ իրավապահ մարմինների միջև: ՖՀՄ-ները պատասխանատու են ֆինանսական տեղեկությունների փոխանակման համար ինչպես ներպետական տարբեր գերատեսչությունների, այնպես էլ օտարերկրյա իրավասու մարմինների հետ:

Հայաստանի ՖՀՄ-ն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնն է (ՖԴԿ), որը ստեղծվել է 2005 թվականին՝ որպես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի առանձնացված ստորաբաժանում: ՖԴԿ-ի լիազորությունները սահմանված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով, իսկ կազմակերպական կառուցվածքն ու գործառույթները սահմանված են [ՖԴԿ-ի կանոնադրությամբ](#):

*բ. ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը*

### 1) ՖԴԿ-ի կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների տրամադրումը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի հիման վրա իր գործառույթներն իրականացնելիս ՖԴԿ-ն տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ հանրային և մասնավոր,

ստանում և վերլուծում է ֆինանսական բնույթի տվյալներ: ՖԴԿ-ի կողմից ստացվող տեղեկությունների հիմնական աղբյուր են հանդիսանում հաշվետվություն տրամադրող անձինք:<sup>5</sup> Վերջինները փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում կրում են մի շարք պարտականություններ, այդ թվում՝ պարտավոր են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքում նախատեսված դեպքերում հաշվետվություններ ներկայացնել ՖԴԿ-ին: Հաշվետվությունները կարող են վերաբերել կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների կամ որոշակի շեմը գերազանցող գումարի չափով կանխիկ կամ անկանխիկ գործարքների: ՖԴԿ-ն իրավասու է նաև իր նախաձեռնությամբ դիմելու հաշվետվություն տրամադրող անձանց և պահանջելու ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի նպատակներից բխող տեղեկություններ, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Եթե իրեն հասանելի տեղեկությունների վերլուծության արդյունքում ՖԴԿ-ն գալիս է եզրահանգման, որ **առկա են փողերի լվացման հետ կապված հիմնավոր կասկածներ կամ նախորդող հանցագործության այնպիսի հիմնավոր կասկածներ, որոնք կարող են հանգեցնել փողերի լվացման**, ՖԴԿ-ն դրա մասին ծանուցում է ուղարկում իրավապահ մարմիններին: Իրականացված վերլուծության արդյունքները կարող են վերաբերել արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող գործի քննության կամ հիմք հանդիսանալ նոր քրեական վարույթի նախաձեռնման համար:

ՖԴԿ-ի տրամադրած ծանուցումները չեն հանդիսանում հաղորդում քրեական դատավարության օրենսդրության իմաստով և կարող են օգտագործվել միայն որպես օպերատիվ բնույթի տեղեկություններ:

## 2) ՖԴԿ-ի կողմից տեղեկությունների տրամադրումը հարցման հիման վրա

Ի լրումն սեփական նախաձեռնությամբ իրավապահ մարմիններին տեղեկությունների տրամադրման լիազորության՝ ՖԴԿ-ն իրավասու է նաև իրավապահ մարմինների հարցումների հիման վրա վերջիններիս փոխանցել իր տրամադրության տակ առկա, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, եթե հարցումը պարունակում է **բավարար հիմնավորում փողերի լվացման կասկածի կամ դեպքի վերաբերյալ կամ նախորդող հանցագործության կասկածի կամ դեպքի վերաբերյալ, որը ՖԴԿ-ի կարծիքով կարող է հանգեցնել փողերի լվացման:**

---

<sup>5</sup> Հաշվետվություն տրամադրող անձանց ցանկը նախատեսված է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով և ներառում է ինչպես ֆինանսական (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), այնպես էլ ոչ ֆինանսական (նոտարներ, փաստաբաններ, հաշվապահներ և այլն) ոլորտի հաստատություններ և անձինք:

Տեղեկությունները տրամադրվում են 10-օրյա ժամկետում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ ՖԴԿ-ի հիմնավորված կարծիքով անհրաժեշտ չէ ավելի երկար ժամկետ հարցմանը պատասխանելու համար:

Համագործակցության արդյունավետության բարձրացման և օրենսդրության համապատասխանությունն ապահովելու նպատակով ՖԴԿ-ն մշակվել է և 2020 թվականի մարտի 23-ին շրջանառել է «Քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն հարցում կատարելու սկզբունքները և հարցման բնութագրիչները» փաստաթուղթը, որը պարունակում է հարցման կազմման գործընթացի համար օգտակար մեկնաբանություններ:

### **3) ՖԴԿ-ի հասանելիությունը քրեական վարույթի նյութերին**

ՖԴԿ-ն իր լիազորությունների իրականացման նպատակով իրավասու է նաև պահանջել տեղեկություններ, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ պետական, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից և վարույթի հանրային մասնակիցներից: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի համաձայն՝ ՖԴԿ-ի հարցումը ստացած պետական մարմինները պետք է այդ տեղեկությունները լիազոր մարմնին տրամադրեն 10-օրյա ժամկետում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ պետական մարմնի հիմնավորված կարծիքով անհրաժեշտ չէ ավելի երկար ժամկետ հարցմանը պատասխանելու համար: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցները նախաքննության՝ հրապարակումն արգելված տվյալները տրամադրում են, եթե լիազոր մարմնի հարցումը պարունակում է **բավարար հիմնավորում փողերի լվացման կասկածի կամ դեպքի վերաբերյալ:**

### **4) ՖԴԿ-ի կողմից գործարքների կասեցումը**

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի հիման վրա ՖԴԿ-ն հնարավորություն ունի օրենքով նախատեսված ժամկետներով կասեցնելու գործարքը կամ գործարար հարաբերությունը, եթե առկա է փողերի լվացման կասկած:

ՖԴԿ-ի կողմից կասեցումը կարող է կիրառվել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ իրավապահ մարմիններից ստացված տեղեկությունների վերլուծության հիման վրա: Համապատասխան հիմքերի առկայության դեպքում կասեցմանը զուգահեռ ՖԴԿ-ն կարող է դեպքի վերաբերյալ ուղարկել ծանուցում իրավապահ մարմիններին: Նշված դեպքում կասեցման ժամկետը համարվում է երկարաձգված ծանուցման տրամադրման պահից 15 օրով, որի ընթացքում իրավապահ մարմինները կարող են տեղեկացնել ՖԴԿ-

ին կասեցման ժամկետը երկարաձգելու հիմնավոր անհրաժեշտության մասին: Անհրաժեշտության դեպքում ՖԴԿ-ն կարող է կայացնել որոշում կասեցման ժամկետը մինչև 30 օրով երկարաձգելու մասին:

ՖԴԿ-ի այս իրավասությունը կարևոր է հանցավոր գույքի հնարավոր արտահոսքն օպերատիվ զսպելու տեսանկյունից և կարող է թույլ տալ ֆինանսական քննություն իրականացնող իրավապահ մարմիններին կասեցման ժամանակահատվածում իրականացնել անհրաժեշտ դատավարական միջոցառումներ գույքի արգելադրման համար:

## 2. ՖԴԿ-ի տրամադրած տեղեկությունների օգտագործումը և համագործակցության ձևաչափը

### *ա. Ֆինանսական հետախուզության տվյալների օգտագործումը և հետադարձ կապը*

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքը նախատեսում է, որ ՖԴԿ-ի կողմից իրավապահ մարմիններին տրամադրած տեղեկությունները **օպերատիվ տեղեկություններ են**, որոնք կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով և չեն կարող տրամադրվել երրորդ անձի, բացառությամբ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցների: Նշվածից բխում է, որ ներպետական օրենսդրությունը չի նախատեսում ՖԴԿ-ի կողմից տրամադրած տեղեկությունները քրեական վարույթում որպես ապացույց օգտագործելու հնարավորություն:

ՖԴԿ-ի տրամադրած տեղեկությունները միայն որպես օպերատիվ տվյալներ օգտագործելու սահմանափակումը սակայն չի նվազեցնում դրա կարևորությունը ֆինանսական քննության շրջանակներում: ՖԴԿ-ի տրամադրած տվյալները կարող են օրինակ՝ օգտակար լինել հանցավոր սխեման պատկերացնելու և այդ հաշվառմամբ ապացույցների հավաքման գործընթացը պլանավորելու համար: ՖԴԿ-ի կողմից կարող են նաև կարճ ժամկետներում բացահայտվել հանցավոր գույքի շարժը և դրա գտնվելու վայրը, որը կարող է թույլ տալ քննիչին ձեռնարկել քայլեր օտարերկրյա գործընկերների հետ կապ հաստատելու և գույքի շուտափույթ արգելադրումը ապահովելու համար:

Ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ տեղեկությունների փոխանակումն հիմնականում իրականացվում է ֆինանսական հետախուզության մարմինների էզմոնտ խմբի կապուղու միջոցով՝ «էզմոնտ խմբի տեղեկությունների փոխանակման սկզբունքների» հիման վրա: Էզմոնտ խմբի շրջանակներում տեղեկությունների փոխանակման տեսանկյունից կարևոր է առանձնացնել փոխադարձության սկզբունքը, ինչպես նաև ստացված տեղեկությունների օգտագործման պայմանը, որի համաձայն, տրամադրված



տեղեկությունները պետք է օգտագործվեն բացառապես այն նպատակով, որի շրջանակներում դրանք տրամադրվել են օտարերկրյա գործընկերների կողմից:

Այս առումով արդյունավետ է համարվում ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմիններից ստացված տեղեկությունների օգտագործումը փոխադարձ իրավական օգնության հարցումների շրջանակներում: Ի թիվս այլնի, ՖԴԿ-ն էզմոնտ խմբի կապուղու միջոցով օտարերկրյա գործընկերներից սեղմ ժամկետներում կարող է ստանալ այլ երկրներում առկա բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ, որոնք կարող են բարձրացնել ուղարկվող փոխադարձ իրավական օգնության հարցման կատարման արդյունավետությունը: Այսպես օրինակ, հարցման մեջ կարող է նշվել, որ իրավասու մարմինների օպերատիվ տվյալներով մեղադրյալը տվյալ երկրի կոնկրետ բանկում ունի սպասարկվող հաշիվ՝ նշելով հաշվեհամարը: Գործնականում չի պահանջվում, որ իրավասու մարմինը բացահայտի, թե որտեղից են վերջինիս հայտնի դարձել այդ տվյալները, մյուս կողմից նման մանրամասների նշումը հարցման մեջ էականորեն կարող է բարձրացնել դրա կատարման հավանականությունը և կրճատել պատասխանի ստացման ժամկետները:

Կարևոր է նաև, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցները ծանուցումների և հարցման հիման վրա ստացած տեղեկությունների օգտագործման ուղղությունների և արդյունքների վերաբերյալ ողջամիտ ժամկետներում տեղեկացնեն ՖԴԿ-ին: Հետադարձ կապի ապահովումը թույլ է տալիս բացահայտել հաղորդակցման մեջ առկա բացերը և բարձրացնել համագործակցության որակը:

#### *բ. ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև համագործակցության կարգը*

ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև օպերատիվ համագործակցության խթանմանն է ուղղված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական հետախուզության տվյալների փոխանակման հարթակի» ներդրումը, որի միջոցով ՖԴԿ-ն և համակարգի մասնակից մարմինները, առանձնացված կապուղիներով արագ և անվտանգ տեղեկատվություն են փոխանակում միմյանց միջև:

Հաշվի առնելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում փոխադարձ համագործակցության անհրաժեշտությունը՝ դեռևս 2008 թվականին բոլոր իրավապահ մարմինների և ՖԴԿ-ի միջև կնքվել են փոխըմբռնման համաձայնագրեր՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման արդյունավետ մեխանիզմների ներդրման նպատակով: Համաձայնագրերը վերակնքվել են 2016թ.-ին՝ ընդգրկելով նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարը: Վերակնքված համաձայնագրով նախատեսվել են

փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում համագործակցության հետևյալ ուղղությունները.

- տեղեկությունների փոխանակում,
- փողերի լվացման հնարավոր դեպքերի կամ վարկածների, ինչպես նաև իրավական ակտերի և փաստաթղթերի կապակցությամբ համատեղ քննարկումների անցկացումը,
- կանոնակարգերի, ուղեցույցերի և այլ մեթոդական նյութերի, ինչպես նաև ռազմավարական վերլուծությունների, քաղաքականությունների մշակման գործում փոխօգնությունը,
- փողերի լվացման վերաբերյալ գործերով վիճակագրության վարման և տիպաբանությունների կազմման հարցերով համատեղ գործունեությունը,
- ուսուցման, վերապատրաստման և խորհրդատվության համատեղ ծրագրերի իրականացումը:

# Գլուխ 4. Ակտիվների վերականգնումը

## 1. Հանցավոր գույքի բռնագրավումը մեղադրական դատավճռի հիման վրա

### *ա. Հանցավոր գույքի բռնագրավման նպատակները*

Ֆինանսական հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի նախապայման է հանցավոր գույքի բռնագրավման մեխանիզմների առկայությունը: Միջազգային չափանիշներից բխում է, որ պետությունները պետք է առնվազն հնարավորություն ունենան բռնագրավելու հանցավոր գույքը մեղադրական դատավճռի առկայության դեպքում: Առանց մեղադրական դատավճռի բռնագրավման հնարավորություն ընձեռող մեխանիզմների առկայությունն իր հերթին ողջունվում է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայով, Վարշավայի կոնվենցիայով, ՖԱԹՖ Հանձնարարականներով, ԵՄ հրահանգներով և մի շարք այլ միջազգային փաստաթղթերով, իսկ նմանօրինակ մեխանիզմներ արդեն ներդրված են բազմաթիվ երկրներում:

Հանցավոր գույքի բռնագրավման մեխանիզմների հիմնական նպատակներից է նվազեցնել ֆինանսական հանցագործությունների գրավչությունը՝ վերացնելով ստացված օգուտները «վայելելու» հավանականությունը: Նշվածը հատկապես ակնհայտ է փողերի լվացման հանցանքի դեպքում, որը գլխավորապես կատարվում է ոչ միայն նախորդող հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու, այլ նաև հանցավոր գույքի օրինականացման արդյունքում դրա բացահայտումը և բռնագրավումը բացառելու նպատակով:

Վերոնշյալի լույսի ներքո՝ հանցավոր գույքի բռնագրավման օրենսդրական մեխանիզմների առկայությունը և դրանց արդյունավետ կիրառումը կարևոր նշանակություն ունեն հանցավորության կանխարգելման հարցում:

### *բ. Մեղադրական դատավճռի հիման վրա գույքի բռնագրավումը*

Հանցավոր գույքի բռնագրավման «դասական» մեխանիզմը ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածով, համաձայն որի՝ բռնագրավման է ենթակա հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան:

**Հանցագործության արդյունքում ուղղակի և անուղղակի առաջացած կամ ստացված գույքը** ներառում է այն գույքը, որը հանցագործը չէր ստանա, եթե կատարած չլիներ հանցանքը:

**Հանցավոր գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը** գործնականում կարող է մեկնաբանվել բավականին լայն և ներառել օրինակ հանցավոր ճանապարհով ստացված գումարներով ձեռք բերված անշարժ գույքի վարձակալությունից ստացված եկամուտները, դրամական միջոցների վրա հաշվեգրվող տոկոսները, հանցավոր գույքի ներդրմամբ իրականացված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը և այլն:

**Հանցագործության գործիքը, միջոցը և առարկան** ենթակա են բռնագրավման նույնիսկ եթե դրանք ձեռք են բերվել օրինական ճանապարհով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ դրանց բռնագրավումն ակնհայտ անհամաչափ է՝ հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթն ու ծանրության աստիճանը: Մյուս կողմից, բռնագրավման համաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել գույքը հետագայում այլ հանցագործության կատարման համար օգտագործելը կանխելու կարևորությունը:

Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գույքի հայտնաբերումը և դրա բռնագրավման ապահովումը չեն գտնվում իրավապահ մարմինների հայեցողության ներքո: Այսինքն, **Ֆինանսական քննության պարտադիր մաս պետք է կազմի ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նկարագրին համապատասխանող գույքի ամբողջ ծավալի հայտնաբերումը և դրա հետագա բռնագրավման համար համապատասխան միջոցառումների իրականացումը:**

Հաշվի առնելով նշված հոդվածի կարգավորումները՝ յուրաքանչյուր ֆինանսական քննություն պետք է պատասխանի առնվազն հետևյալ հարցերին.

- 1) Արդյո՞ք իրականացվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները բացահայտելու համար հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության գործիքները, միջոցները, առարկան (այսուհետ՝ հանցավոր գույք) և կազմվել է բացահայտված հանցավոր գույքի ցանկ:
- 2) Արդյո՞ք բացահայտված հանցավոր գույքի ցանկում առկա է այնպիսի գույք, որի բռնագրավումը ակնհայտ անհամաչափ է՝ հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթն ու ծանրության աստիճանը:

- 3) Արդյո՞ք բացահայտված հանցավոր գույքի ցանկում առկա է շրջանառությունից հանված օբյեկտ համարվող կամ անձանց ու հասարակության համար վրանգ ներկայացնող գույք:
- 4) Արդյո՞ք հայտնի է հանցավոր գույքի յուրաքանչյուր միավորի գտնվելու վայրը:
- 5) Արդյո՞ք հայտնաբերած գույքի շրջանակներում առկա է հանցավոր գույք, որը գտնվում է բարեխիղճ երրորդ անձի մոտ կամ միախառնված է<sup>6</sup> օրինական ճանապարհով ստացված գույքի հետ:
- 6) Եթե առկա է հանցավոր գույք, որի գտնվելու վայրը հայտնի չէ, կամ հանցավոր գույք, որը գտնվում է բարեխիղճ երրորդ անձի մոտ կամ միախառնված է օրինական ճանապարհով ստացված գույքի հետ, արդյո՞ք իրականացվել են անհրաժեշտ գործողություններ այդպիսի գույքի արժեքը պարզելու ուղղությամբ:
- 7) Արդյո՞ք կիրառվել են անհրաժեշտ արգելադրումներ՝ հանցավոր գույքի հետագա բռնագրավումը ապահովելու համար:

Նկարագրված հարցադրումներին առնչվող տեղեկություններն իրենց հերթին պետք է արտացոլված լինեն մեղադրական եզրակացությանը կից նյութերում՝ ի կատարումն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պահանջի:

## 2. Հանցավոր գույքի բռնագրավումն այլ մեխանիզմների օգտագործմամբ

### ա. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավումը

Ներպետական օրենսդրությունը նախատեսում է առանց մեղադրական դատավճռի հանցավոր գույքի բռնագրավման երկու հիմնական մեխանիզմ՝ ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցված քրեական հետապնդման շրջանակներում հանցավոր գույքի բռնագրավումը և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը:

**Ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցված քրեական հետապնդման շրջանակներում հանցավոր գույքի բռնագրավման մեխանիզմը** նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածով: Մեխանիզմը կիրառելի է, եթե քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցվում է դատարանի կողմից և դատարանում ապացուցման է ենթակա գույքի կապը քրեական օրենսգրքով արգելված արարքի հետ: Հանցավոր գույքը ենթակա է բռնագրավման անկախ դրա չափից:

<sup>6</sup> Միախառնված գույքի օրինակ կարող է լինել անշարժ գույքը, որը մի մասով ձեռք է բերվել օրինական, իսկ մյուս մասով՝ հանցավոր եկամուտներով:

**Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմը** նախատեսված է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով: Գույքի բռնագանձումն իրականացվում է քաղաքացիական դատավարության կարգով: Դատարանում ապացուցման է ենթակա էական անհամապատասխանության առկայությունն անձին պատկանող գույքի և օրինական եկամուտների միջև: Ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե անձի գույքի և եկամուտների միջև անհամապատասխանությունը գերազանցում է 50 միլիոն դրամը:

Այսպիսով, քրեական գործի հնարավոր ձախողումը չպետք է էական ազդեցություն ունենա ֆինանսական քննության ուղղությունների վրա՝ հաշվի առնելով առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավման մեխանիզմների հնարավոր կիրառելիությունը: Ավելին, որակյալ ֆինանսական քննության արդյունքները (օրինակ՝ կասկածվող անձին պատկանող գույքի և եկամուտների միջև անհամապատասխանությունների վեր հանումը) կարևոր են առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավման մեխանիզմներով հաջողության հասնելու համար:

#### *բ. Այլ պետության տարածքում գտնվող գույքի բռնագրավումը*

Հանցավոր գույքը հաճախ կարող է տեղափոխված լինել այլ պետության տարածք, որի դեպքում ֆինանսական քննությունը պետք է հաշվի առնի հանցավոր գույքի բռնագանձման հնարավոր դժվարությունները և մշակի դրանց հաղթահարման ճանապարհային քարտեզ: Այդ թվում, պետք է ուսումնասիրել հետաքրքրություն ներկայացնող երկրի օրենսդրությունը և կիրառելի միջազգային պայմանագրերը, ինչպես նաև հնարավորության դեպքում խորհրդակցել օտարերկրյա գործընկերների հետ պարզելու համար՝

- 1) Արդյո՞ք ներպետական դատարանի կողմից կայացված դատական ակտը կարող է, առանց գործի ըստ էության քննության, բռնագանձվող գույքի մասով ճանաչվել և կատարվել գույքի գտնվելու վայրի երկրում:
- 2) Արդյո՞ք գույքի առանձին տեսակների (օրինակ՝ անշարժ գույքի) մասով կարող է առաջանալ դատական ակտի ճանաչման և կատարման անհնարինություն:

Եթե առկա է ռիսկ, որ ներպետական դատարանի կողմից կայացված ակտը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն չճանաչվել, ապա պետք է օտարերկրյա գործընկերների հետ քննարկել համագործակցության այլ տարբերակներ, որոնք հնարավոր են՝ հաշվի առնելով տվյալ պետության օրենսդրությունը և կիրառելի միջազգային պայմանագրերը: Կարող են քննարկվել օրինակ հետևյալ տարբերակներ՝

- Օտարերկրյա պետության կողմից կարող է ներպետական դատական ակտի հիմքով իրականացվել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման գործընթաց տվյալ պետության օրենսդրությանը

համապատասխան, որի արդյունքում հայտնաբերված և բռնագանձված գույքը կարող է բաշխվել կողմերի միջև միջազգային պայմանագրերին և երկկողմ համաձայնություններին համապատասխան:

- Եթե հանցագործությունը կատարվել է նաև օտարերկրյա պետության տարածքում, վերջինիս իրավասու մարմինների կողմից կարող է իրականացվել վարույթ (այդ թվում՝ զուգահեռաբար ներպետական մարմինների կողմից իրականացվող վարույթին), որի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը կարող է ներգրավվել որպես քաղաքացիական հայցվոր կամ տուժող և պահանջել պատճառված վնասների հատուցում:

# Գլուխ 5. Միջազգային համագործակցությունը

## 1. Վարչական փոխօգնությունը

Քրեական վարույթում միջազգային համագործակցությունը ենթադրում է հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ իրավական աջակցության տրամադրում դատական կամ իրավապահ մարմիններին: Իրավական աջակցությունը կարող է դրսևորվել հանձնման, քրեական վարույթի փոխանցման, դատական ակտերի ճանաչման, քննչական գործողությունների կատարման և այլ եղանակներով: Այն կարող է իրականացվել փոխադարձ իրավական օգնության (ՓԻՕ հարցում) կամ վարչական փոխօգնության եղանակներով:

Վարչական փոխօգնության մեխանիզմներն իրավապահ մարմինների միջև օգտագործվում են օպերատիվ տեղեկություններ ստանալու համար: Նշված մեխանիզմներին հղում են կատարում նաև որպես «ոչ պաշտոնական» համագործակցություն, քանի որ գործընթացը չի ենթադրում պաշտոնական նամակագրության փոխանակում: Ի տարբերություն վարչական փոխօգնության շրջանակներում իրականացվող հարցումների՝ ՓԻՕ հարցումը պետության կողմից պաշտոնական եղանակով ուղարկված խնդրանք է:

Վարչական փոխօգնության մեխանիզմները օգտագործվում են այն դեպքերում, երբ տեղեկությունների հավաքումը հայցվող պետության կողմից կարող է կատարվել առանց իշխանական բնույթի լիազորությունների օգտագործման (օրինակ՝ առանց խուզարկության թույլտվություն ստանալու անհրաժեշտության): Այս մոտեցումը կրճատում է տեղեկությունների ստացման ժամկետները և ողջունվում է պետությունների մեծամասնության կողմից: Ընդ որում, կարևոր է նշել, որ չնայած մեխանիզմները բնութագրվում են որպես ոչ պաշտոնական, դրանց միջոցով ստացված տեղեկությունները կարող են նաև օգտագործվել քրեական վարույթում որպես ապացույց՝ տեղեկությունները տրամադրող մարմնի համաձայնությամբ և քրեական դատավարության օրենսդրության պահանջների հաշվառմամբ:

**Վարչական փոխօգնության մեխանիզմների օգտագործումը կարևոր գրավական է ՓԻՕ հարցման հիման վրա ապացույցները հաջողությամբ և կարճ ժամկետներում ստանալու համար:** Իրավապահ մարմինների միջև նախնական կապ հաստատելու դեպքում հարցումը ստացող պետության ներկայացուցիչները հնարավորություն են ունենում հստակեցնելու նամակի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները մինչև դրա պաշտոնական ստորագրումը և ուղարկումը: Նախապես կապի հաստատումը կարող է նաև թույլ տալ հստակեցնել պաշտոնական հարցմամբ ներկայացվող հարցերի շրջանակը: Օրինակ, եթե անհրաժեշտ է ստանալ



տեղեկություններ այլ երկրում գտնվող կազմակերպության աշխատակցից, մինչև պաշտոնական հարցման ուղարկումը վարչական կապուղիներով կարող է հստակեցվել տվյալ կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը, ինչը կարող է արդեն նշվել պաշտոնական հարցման տեքստում և դյուրինացնել դրա հետագա կատարումը ստացող պետության մարմինների կողմից:

**Ավելին մինչև պաշտոնական նամակի ուղարկումը պետք է գնահատել՝ արդյոք աջակցությունը չի կարող ցուցաբերվել բացառապես վարչական փոխօգնության մեխանիզմների օգտագործմամբ:** Այդպիսի դեպք կարող է լինել, օրինակ, երբ անհրաժեշտ է ստանալ տվյալ երկրում հանրային հասանելիություն ունեցող տեղեկություններ (անշարժ գույքի ռեեստրից, իրավաբանական անձանց ռեեստրից և այլն) կամ անհրաժեշտ է կապ հաստատել տվյալ երկրում գտնվող վկաների հետ, որոնք պատրաստակամ են ցուցմունք տալ:

Իրավապահ մարմինների միջև կապը կարող է իրականացվել ինչպես գործընկերային հիմունքներով տվյալ երկրի ներկայացուցիչների հետ ուղղակի կապի միջոցով, այնպես էլ՝ վարչական փոխօգնությունը խթանելուն ուղղված ցանցերի միջոցով:

Հայաստանի Հանրապետությունը (պատասխանատու մարմինների միջոցով) միացել է վարչական փոխօգնության հնարավորություններ ստեղծող ստորև ներկայացված ցանցերին: Իրավապահ մարմինը, ում վարույթում գտնվում է քրեական վարույթը, որով անհրաժեշտ է ստանալ տեղեկություններ արտասահմանից, կարող է խորհրդակցել ներպետական կոնտակտային մարմնի պատասխանատու աշխատակիցների հետ համապատասխան ցանցի օգտագործմամբ անհրաժեշտ տվյալները ստանալու նպատակահարմարության և հարցում կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունների հարցերով:

#### *ա. Ինտերպոլ*

Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությունը (Ինտերպոլ) միջկառավարական կազմակերպություն է, որին անդամակցում են ավելի քան 190 երկրներ: Ինտերպոլի նպատակն է պայքարել հանցավորության դեմ՝ ստեղծելով ոստիկանական մարմինների միջև հանցագործությունների և հանցագործների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման հնարավորություններ, ինչպես նաև տրամադրելով տեխնիկական և գործառութային աջակցություն:

Ինտերպոլը գործում է Գլխավոր քարտուղարության և Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոների (այսուհետ՝ ԱԿԲ) միջոցով: Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ԱԿԲ-ն ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի կազմում ինքնուրույն վարչության կարգավիճակ ունեցող օպերատիվ

ստորաբաժանում է: ԱԿԲ-ի կողմից տեղեկություններ տրամադրելու և ստանալու պայմանները սահմանվում են [ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի թիվ 654-Ն որոշմամբ](#):

Ինտերպոլի անդամ երկրների միջև կապն ապահովվում է I-24/7 կոչվող հաղորդակցման համակարգի միջոցով, որի օգտագործմամբ ԱԿԲ-ները կարող են կապ հաստատել միմյանց և քարտուղարության հետ, ստանալ տեղեկություններ Ինտերպոլի տվյալների շտեմարաններից:

Ինտերպոլը, որպես կանոն, չի հանդիսանում ՓԻՕ հարցումների ուղարկման կապուղի: Մինչույն ժամանակ, այն անդամ երկրներին տալիս է արագ կերպով վարույթի համար էական տեղեկություններ փոխանակելու հնարավորություն:

Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ԱԿԲ-ի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ հասանելի են [այստեղ](#):

#### *բ. Եվրոպոլ*

Եվրոպոլը Եվրոպական միության իրավապահ գործակալությունն է, որի հիմնական նպատակն է Եվրոպան դարձնել ավելի անվտանգ ի շահ ԵՄ քաղաքացիների: Եվրոպոլը աջակցում է 27 ԵՄ անդամ երկրներին ահաբեկչության, կիբեռհանցավորության կամ այլ ծանր և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում: Կազմակերպությունը աշխատում է նաև ԵՄ անդամ չհանդիսացող գործընկեր պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Եվրոպոլը աջակցում է իրավապահ մարմինների գործունեությանը, հանդիսանում է հանցավորության վերաբերյալ տեղեկությունների փոխանակման կապուղի և տրամադրում է փորձագիտական աջակցություն իրավապահ մարմիններին:

2021 թվականի սեպտեմբերի 16-ին Եվրոպոլի և Հայաստանի միջև ստորագրվել է ռազմավարական համագործակցության համաձայնագիր՝ ընդլայնելու համագործակցությունը անդրսահմանային հանցավոր գործունեության դեմ պայքարում:

Համաձայնագիրը երկու կողմերին հնարավորություն է տալիս փոխանակել ընդհանուր ռազմավարական հետախուզության տվյալներ, ինչպես նաև ռազմավարական և տեխնիկական բնույթի տեղեկություններ, օպերատիվ տեղեկություններ, բացառությամբ՝ անձնական տվյալների:

Կնքված համաձայնագրի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ հասանելի են [այստեղ](#):

#### գ. Կարին

Կարինը ակտիվների հայտնաբերման, սառեցման, առգրավման և բռնագանձման ոլորտում իրավապահ մարմինների միջև գործող ոչ պաշտոնական ցանց է: Յուրաքանչյուր անդամակցող պետություն ներկայացված է իրավապահ մարմնից ներկայացուցչի և դատավարական ոլորտի մասնագետի միջոցով:

Կազմակերպության նպատակն է բարձրացնել ապօրինի ակտիվների շրջանառության դեմ պայքարի ոլորտում անդամ երկրների ջանքերի արդյունավետությունը: Անդամ երկրների կոնտակտային անձինք հասանելի են հեռախոսային կապի միջոցով և իրենց էլեկտրոնային փոստի հասցեներով և պատրաստ են տրամադրել աջակցություն ակտիվների հետախուզման բոլոր փուլերում:

Ցանցին անդամակցում են ավելի քան 50 պետություն: Հայաստանը ցանցին միացել է դիտորդի կարգավիճակով, սակայն որպես այդպիսին օգտվում է ցանցի տրամադրած բոլոր հնարավորություններից: Իրավապահ մարմիններից Հայաստանի Հանրապետության կոնտակտային անձ է հանդիսանում ՀՀ դատախազության ներկայացուցիչը, ում միջոցով հնարավոր է կապ հաստատել այլ երկրների կոնտակտային անձանց հետ:

Կարին ցանցի մասին հավելյալ տեղեկություններ հասանելի են [այստեղ](#):

#### դ. Էզմոնտ խումբ

Ֆինանսական հետախուզության մարմինների Էզմոնտ խումբն աջակցում է անդամ ֆինանսական հետախուզության մարմինների (ՖՀՄ) միջև տեղեկությունների և փորձի փոխանակմանը և խթանում է նրանց համագործակցությունը: Այն տրամադրում է ՖՀՄ-երին անվտանգ հարթակ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և ֆինանսական բնույթի օպերատիվ տեղեկությունների փոխանակման համար:

ՖԴԿ-ի կողմից Էզմոնտ խմբի անդամ պետություններից տեղեկությունների ստացման և իրավասու մարմիններին դրանք հասանելի դարձնելու դեպքերը և կարգը նախատեսված են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով:

ՖԴԿ-ի հետ իրավապահ մարմինների համագործակցության առանձնահատկություններին անդրադարձ է կատարված 3-րդ գլխում:

## 2. Փոխադարձ իրավական օգնությունը

Քրեական վարույթում ՓԻՕ-ը տրամադրվում է երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի, իսկ դրանց բացակայության դեպքում՝ որպես կանոն, փոխադարձության և հարցումը ստացող երկրների ներպետական օրենսդրության հիման վրա: Չնայած առկա չէ հանցավորության բոլոր տեսակների համար կիրառելի

համընդհանուր և ունիվերսալ միջազգային կոնվենցիա, առկա են կոնվենցիաներ, որոնք կարգավորում են մեծ քանակի պետությունների միջև որոշակի տեսակի հանցագործությունների դեպքում միջազգային փոխօգնության տրամադրումը: Օրինակ՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան կարող է վկայակոչվել դրա անդամ ավելի քան 180 պետությունների հետ համագործակցելիս՝ որպես իրավական օգնության տրամադրման հիմք կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության դեպքերում:

ՓԻՕ հայցելու համար կարևոր է պարզել դրա իրավական հիմքը և ՓԻՕ հարցման մեջ վկայակոչել այն իրավական ակտերը, որոնք պարտավորեցնում են տվյալ պետության իրավապահ մարմիններին տրամադրել հայցվող աջակցությունը:

### *ա. Իրավական հիմքերը*

ՓԻՕ-ն հիմնականում հայցվում է միջազգային պայմանագրի հիման վրա և միայն դրա բացակայության պայմաններում ներպետական օրենսդրության և փոխադարձության սկզբունքի հիման վրա: Կարևոր է ճիշտ ընտրել այն իրավական փաստաթուղթը, որին անդամակցում է հարցումը ստացող պետությունը և որը թույլ է տալիս կոնկրետ հանցանքի դեպքում ուղարկել հետաքրքրող հարցումը: Իրավական հիմքը որոշելուց հետո պետք է ուշադրություն դարձնել, թե տվյալ փաստաթուղթը ինչ պահանջներ է ներկայացնում դրա հիման վրա ուղարկվող հարցումներին, և որոնք կարող են լինել հարցման կատարումը մերժելու հիմքերը:

Կից Հավելված 1-ում ներկայացված են Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հիմնական բազմակողմ միջազգային պայմանագրերը, որոնք կարող են թույլ տալ փողերի լվացման գործերով իրավական փոխօգնության տրամադրումը:

ՓԻՕ հարցման իրավական հիմքն ընտրելու համար կարևոր է պատասխանել հետևյալ հարցերին.

- 1) Արդյո՞ք կոնվենցիան ուժի մեջ է մտել հարցումը ստացող պետության համար.
- 2) Արդյո՞ք կոնվենցիայի կիրառելիության ոլորտը ներառում է այն հանցանքը, որի կապակցությամբ արվում է հարցումը.
- 3) Արդյո՞ք կոնվենցիայի անդամ պետությունն արել է այնպիսի վերապահումներ կամ հայտարարություններ, որոնք կարող են խոչընդոտել տվյալ հարցման կատարմանը.
- 4) Արդյո՞ք կոնվենցիան պարտավորեցնում է անդամ երկրներին տրամադրել ՓԻՕ այն տեսակը, որը նախատեսվում է հայցել:

Հարցման իրավական հիմքն ընտրելիս պետք է ուշադրություն դարձնել նաև, թե ինչ հիմքերով կարող է մերժվել հարցման կատարումը: Այսպես, որոշ կոնվենցիաների դրույթներ<sup>7</sup> արգելում են անդամ պետություններին մերժել հարցման կատարումն այն հիմքով, որ հայցվող տեղեկությունները հանդիսանում են բանկային գաղտնիք, մինչդեռ այլ կոնվենցիաներ չեն պարունակում նման երաշխիք: Հետևաբար, եթե հարցման հիման վրա պահանջվելու են նաև ֆինանսական բնույթի տեղեկություններ, որպես հարցման իրավական հիմք նպատակահարմար է նշել նման երաշխիք պարունակող կոնվենցիա:

Բազմակողմ և երկկողմ համաձայնագրերի բացակայության պայմաններում միայն հարցումը կարող է արվել փոխադարձության և տվյալ պետության ներպետական օրենսդրության հիման վրա:

Ընդ որում, փոխադարձ գործընկերային հարաբերություններ հաստատելու համար կարևոր է այլ պետությունից ուղարկված հարցման ձևի կամ բովանդակության հետ կապված խնդիրների (օրինակ՝ սխալ իրավական հիմքերի վկայակոչման) պատճառով մեխանիկորեն չմերժել ստացված ՓԻՕ հարցումների կատարումը: Փոխարենը կարելի է հուշել գործընկերներին հայտնաբերված խնդիրները շտկելու ձևերը կամ քննարկել առանց դրանց շտկման՝ հարցման կատարման հնարավորությունը, եթե դա թույլ է տալիս կիրառելի օրենսդրությունը: Սա հետագայում կարող է նպաստել համանման մոտեցման կիրառմանը Հայաստանի կողմից ուղարկված հարցումների առնչությամբ:

#### *բ. Հարցման կառուցվածքը*

Հարցման իրավական հիմքն ընտրելուց հետո պետք է ուշադրություն դարձնել, թե ինչ պահանջներ են դրանով ներկայացվում հարցման ձևի և բովանդակության նկատմամբ, և դրանց պահպանմամբ կազմել պաշտոնական նամակը: Բացի կոնվենցիաներում ներկայացված պահանջներից, պետք է նաև հաշվի առնել տվյալ երկրի կողմից հրապարակված աջակցող նյութերը և հարցումներին սովորաբար ներկայացվող պահանջները:

**Անկախ հնարավոր հասանելի նյութերի ծավալից ամեն դեպքում ցանկալի է վարչական փոխօգնության կապուղիներով կապ հաստատել տվյալ երկրի ներկայացուցիչների հետ և մինչև հարցումը պաշտոնապես ուղարկելը դրա ձևը և**

---

<sup>7</sup> Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 26-րդ հոդվածը, Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վճարման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա 28-րդ հոդվածը, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 46-րդ հոդվածը, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 18-րդ հոդվածը և այլն

**բովանդակությունը համաձայնեցնել ստացող պետության ներկայացուցիչների հետ:**

Հարցումը պետք է կազմվի հնարավորին սեղմ և պարզ կառուցվածքով՝ տեսքով բաժանելով հստակ առանձնացված բաժինների և ենթաբաժիններ: Չնայած յուրաքանչյուր պետություն կարող է իր պահանջներն ունենալ ներկայացվող հարցման ձևի և բովանդակության նկատմամբ, առավել հաճախ ակնկալվում է, որ հարցումը կունենա առնվազն հետևյալ բնույթի վերնագրեր և ենթավերնագրեր՝<sup>8</sup>

-	<b>Հարցման վերնագիրը</b>
	<ul style="list-style-type: none"> <li>• Վարույթի համարը</li> <li>• Հրատապության վերաբերյալ նշում</li> </ul>
-	<b>Հարցումն ուղարկող մարմնի տվյալները</b>
	<ul style="list-style-type: none"> <li>• Անվանումը</li> <li>• Հասցեն</li> <li>• Կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլ հասցե և այլն)</li> <li>• Կոնտակտային լեզուները</li> </ul>
-	<b>Հարցումը ստացող մարմնի տվյալները</b>
	<ul style="list-style-type: none"> <li>• Անվանումը</li> <li>• Հասցեն</li> </ul>
-	<b>Հարցման նպատակը</b>
	<ul style="list-style-type: none"> <li>• Հարցման տեսակը և հայցվող աջակցությունը</li> <li>• Հարցման իրավական հիմք(եր)ը</li> <li>• Հանցանքը</li> <li>• Վարույթի փուլի նկարագրությունը</li> </ul>
<i>Կիրառելիության դեպքում նաև՝</i>	

<sup>8</sup> Հարցման օրինակելի կառուցվածքը կազմվել է՝ հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի՝ քրեական գործերով համագործակցության եվրոպական կոնվենցիաների իրականացման հարցերով փորձագետների կոմիտեի (PC-OC) կողմից 2015 թվականի նոյեմբերի 3-ին ընդունված [Քրեական գործերով փոխադարձ օգնության մոդելային հարցման](#) կառուցվածքը:

<ul style="list-style-type: none"> <li>• Հրատապության հիմնավորումը</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Գործողության կատարման վայրի և տեղի մասին նախնական ծանուցման անհրաժեշտության մասին նշում</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Նախկինում հաստատված վարչական բնույթի կապի վերաբերյալ նշում</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Նախկինում ուղարկված պաշտոնական նամակների վերաբերյալ նշում</li> </ul>
<p><b>- Հետաքրքրություն ներկայացնող անձինք (մեղադրյալները)</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Ֆիզիկական անձանց անունը, ազգանունը, սեռը, քաղաքացիությունը, հասցեն, կարգավիճակը վարույթում, անձնագրային տվյալները, հայտնի մականունները, ծննդյան ամսաթիվը</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Իրավաբանական անձանց անվանումը, գրանցման տվյալները, հասցեն, իրավաբանական անձի անունից գործող ֆիզիկական անձանց կոնտակտային տվյալները</li> </ul>
<p><b>- Գործի իրավական և փաստական տվյալները</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Գործի փաստերի համառոտ նկարագիրը</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Արարքի իրավական որակումը</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Գործի փաստերի, կասկածվող անձանց և հայցվող ապացույցների միջև կապի նկարագրություն</li> </ul>
<p><i>Կիրառելիության դեպքում նաև՝</i></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Հանցանքի արդյունքում պատճառված վնասը</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• Տուժողների վերաբերյալ տեղեկություններ</li> </ul>
<p><b>- Հայցվող միջոցների նկարագիրը</b></p>
<p><b>- Գործողությունների կատարման հատուկ հայցվող կարգը</b></p>
<p><b>- Ապացույցների փոխանցման կարգը</b></p>
<p><b>- Եզրափակիչ տեղեկություններ</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Այլ էական տեղեկություններ</li> </ul>

- Կոնտակտային անձինք (կոնտակտային աշխատակիցը, էլ. հասցե, հեռախոսահամար,<sup>9</sup> կոնտակտային լեզուները և այլն)
- Առդիր փաստաթղթերի ցանկ

Հարցման կառուցվածքի «Հայցվող միջոցի նկարագիրը» վերնագրի ներքո ներառման ենթակա տեղեկությունները կարող են տարբեր լինել՝ կախված հայցվող միջոցի տեսակից (ապացույցների առգրավում, վկաների հարցաքննություն և այլն): Ընդհանուր առմամբ ակնկալվում է, որ ուղարկող մարմինը պետք է նշի հայցվող աջակցության տեսակը (օրինակ՝ ապացույցների առգրավում, խուզարկություն և այլն) և տրամադրի հնարավորինս շատ մանրամասներ տվյալ միջոցի ձեռնարկման համար (օրինակ՝ բանկի տվյալները, որտեղից պետք է ստանալ տեղեկություններ կամ հասցեն, որտեղ պետք է իրականացնել խուզարկություն):

Պետք է նշել, որ ներկայացված կառուցվածքը կարող է միայն ընդհանրական պատկերացում տալ կազմվող հարցման վերաբերյալ, քանի որ ամեն առանձին տեսակի հարցում (ապացույցների առգրավում, վկաների հարցաքննում, գույքի սառեցում և այլն) պետք է պարունակի նաև տվյալ տեսակի հարցման կատարման համար վերաբերելի տեղեկություններ (տե՛ս օրինակ Հավելված 2-ում ներկայացված փոխօգնության հարցման օրինակելի ձևը):

**Հարկավոր է նաև փորձել ուսումնասիրել, թե արդյոք առկա են տվյալ պետության կողմից հրապարակված փաստաթղթեր, որոնք պարունակում են տեղեկություններ տվյալ պետություն ուղարկվող ՓԻՕ հարցումներին ներկայացվող պահանջների վերաբերյալ:** Այդպիսի փաստաթղթի օրինակ է [Միացյալ Թագավորության կողմից հրապարակված ուղեցույցը](#): Եթե հարցումը ստացող պետությունն ունի հրապարակված տեղեկություններ իր կողմից ՓԻՕ ցուցաբերման պայմանների վերաբերյալ, կարևոր է ծանոթանալ դրանց մինչև հարցման կազմումը և ուղարկումը:

Պետության կողմից հրապարակված նյութերի բացակայության պայմաններում կարելի է առնվազն հաշվի առնել միջազգային մարմինների կողմից հրապարակված հարցման օրինակելի կառուցվածք պարունակող փաստաթղթեր, այդ թվում՝ [Եվրոպայի խորհրդի](#) և [Մեծ քսանյակի](#) մարմինների կողմից հրապարակված փաստաթղթերը:

**Ամփոփելով՝ հարցումը պետք է կազմել՝ հաշվի առնելով հարցման հիմքում դրված իրավական ակտում ներառված պահանջները և ստացող պետության կողմից տվյալ հարցմանը ներկայացվող պահանջները: Վերջինը կարելի է պարզել տվյալ պետության կողմից հրապարակված փաստաթղթերին կամ ներպետական**

<sup>9</sup> Առցանց կապի միջոցով զանգ ստանալու հնարավորության մասին նշումը կարող է օգտակար լինել գործընկերների համար ավելի արագ կապի դուրս գալու հնարավորության տեսանկյունից.



օրենսդրությանը ծանոթանալու, ինչպես նաև մինչև հարցման ուղարկումը տվյալ պետության ներկայացուցիչների հետ կապի դուրս գալու միջոցով: Անհնարինության դեպքում, կարևոր է առնվազն հաշվի առնել միջազգային մարմինների կողմից հրապարակված օրինակելի ձևերը: Նկարագրված գործողությունների ձեռնարկումը կարող է էականորեն բարձրացնել հարցման սեղմ ժամկետներում կատարման հնարավորությունը:

## Օգտակար հղումներ

- [Operational Issues: Financial Investigation Guide \(2012\), FATF Report,](#)
- [Asset Recovery Handbook: A Guide for Practitioners \(2021\), Second edition StAR Initiative,](#)
- [Guidelines for the efficient recovery of stolen assets \(2017\), Swiss Federal Department of Foreign Affairs - Directorate of International Law, International Centre for Asset Recovery at the Basel Institute on Governance, StAR Initiative,](#)
- [Manual on International Cooperation for the Purposes of Confiscation of Proceeds of Crime \(2012\), UNODC,](#)
- [Manual on Mutual Legal Assistance and Extradition \(2012\), UNODC.](#)

# Հավելված 1. Միջազգային պայմանագրերի ցանկ

**Քրեական վարույթներով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիա (1959թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1988թ.)**

[Անդամ երկրների ցանկը.](#)

[Կոնվենցիայի տեքստը.](#)

**Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (2000թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (2003թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վլացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (1990թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վլացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2005թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (1999թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին (Քիշնևի) կոնվենցիա (2002թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական  
օգնության և իրավական հարաբերությունների մասին (Մինսկի) կոնվենցիա  
(1993թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

**Անկախ պետությունների համագործակցության մասնակից  
պետությունների՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը)  
և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու մասին պայմանագիր  
(2007թ.)**

[Անդամ երկրների ցանկը](#)

[Կոնվենցիայի տեքստը](#)

## Հավելված 2. Միջազգային հարցման օրինակելի ձև

### ԳՈՒՅՔԻ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ<sup>10</sup>

#### ԲԱԺԻՆ 1.

Որոշումը ուղարկող պետությունը՝ **Հայաստանի Հանրապետություն**

Որոշումը ընդունած մարմինը՝ (...)

Որոշումը հաստատած մարմինը (եթե առկա է)՝ (...)

Որոշումը կատարող պետությունը՝ (...)

Որոշումը կատարող իրավասու մարմինը (եթե հայտնի է)՝ (...)

Հարցման իրավական հիմքը (կիրառելի միջազգային պայմանագրերը կամ փոխադարձության առկայությունը կամ առաջարկը)՝ (...)

#### ԲԱԺԻՆ 2. ՀԱՐՑՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ/ԿԱՄ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՅՑՎՈՂ ԱՄՍԱԹԻՎԸ

1. Խնդրում ենք նշել հրատապության հիմքերը՝

Առկա են ողջամիտ հիմքեր ենթադրելու, որ համապատասխան գույքը կարող է կարճ ժամկետներում տեղափոխվել կամ ոչնչացվել, մասնավորապես՝

(...)

(...)

Առկա է հարցումը ուղարկող պետության կողմից իրականացնող քննությունից կամ վարույթից բխող անհրաժեշտություն, մասնավորապես՝

(...)

(...)

<sup>10</sup> Հարցման օրինակելի ձևը կազմվել է՝ հիմք ընդունելով [2018 թվականի նոյեմբերի 14-ի \(ԵՄ\) թիվ 2018/1805 կանոնակարգի](#) Հավելված 1-ը, որն օգտագործվում է ԵՄ անդամ երկրների միջև սառեցման հարցումները կատարելու համար.

---

2. Հարցման կատարման օրը՝

Հարցումը խնդրում ենք կատարել հստակ օր, մասնավորապես՝ (...)

Առկա է ընթացիկ կողորդինացման անհրաժեշտություն իրավասու մարմինների միջև Նշված խնդրանքը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

(...)

(...)

---

**ԲԱԺԻՆ 3. ԱՆՁԻՆՔ, ՈՒՄ ԱՌՆՉՎՈՒՄ Է ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄԸ**

Այն անձի (անձանց) ինքնությունը, ում դեմ ընդունվել է գույքի արգելադրման որոշումը, կամ այն անձի (անձանց) ինքնությունը, ում պատկանող գույքի առնչությամբ ընդունվել է արգելադրման որոշումը (եթե գույքի արգելադրումը առնչվում է մեկից ավելի անձանց, խնդրում ենք ավելացնել բոլոր անձանց տվյալները)՝

1. Նույնականացնող տվյալներ

***Ֆիզիկական անձի դեպքում՝***

Ազգանունը՝ (...)

Անունը՝ (...)

Այլ անունները, եթե կիրառելի է՝ (...)

Մականունները, եթե կիրառելի է՝ (...)

Սեռը՝ (...)

Քաղաքացիությունը՝ (...)

Հանրային ծառայության համարանիշը կամ սոցիալական քարտի համարը, եթե առկա է՝ (...)

Անձը հաստատող փաստաթղթ(եր)ի տեսակը և համարը (անձնագիր կամ նույնականացման քարտ), եթե առկա է՝ (...)

Ծննդյան ամսաթիվը՝ (...)

Ծննդավայրը՝ (...)

Բնակության և/կամ հայտնի հասցեները (եթե հասցեն հայտնի չէ, վերջին հայտնի հասցեն)՝ (...)

Լեզուները, որոնց տիրապետում է անձը՝ (...)

Անձի կարգավիճակը վարույթում՝

---

Անձ, ում դեմ ընդունվել է գույքի արգելադրման որոշումը

Անձ, ում պատկանում է գույքը, որի առնչությամբ ընդունվել է գույքի արգելադրման որոշումը

***Իրավաբանական անձի դեպքում՝***

Անվանումը՝ (...)

Կազմակերպատիրավական ձևը՝ (...)

Կրճատ անվանումը, հաճախ օգտագործվող անվանումը կամ առևտրային անվանումը, եթե կիրառելի է՝ (...)

Գրանցման վայրը՝ (...)

Գրանցման համարը՝ (...)

Հասցեն՝ (...)

Ղեկավարի անունը՝ (...)

Անձի կարգավիճակը վարույթում՝

Անձ, ում դեմ ընդունվել է գույքի արգելադրման որոշումը

Անձ, ում պատկանում է գույքը, որի առնչությամբ ընդունվել է գույքի արգելադրման որոշումը

2. Հասցեն, որտեղ պետք է իրականացվի գույքի արգելադրումը, եթե այն տարբերվում է վերը նշված հասցեից՝ (...)

3. Երրորդ անձինք, ում գույքային իրավունքները սահմանափակվում են արգելադրման որոշմամբ (նույնականացման տվյալները և հիմքերը)՝

(...)

(...)

4. Այլ տեղեկություններ, որոնք կարող են օգտակար լինել արգելադրման որոշման կատարման ընթացքում՝

(...)

---

**ԲԱԺԻՆ 4. ԱՐԳԵԼԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

---

---

1. Խնդրում ենք նշել, թե որ գույքին է առնչվում արգելադրման որոշումը՝

Դրամական միջոցներ

Կոնկրետ գույքային միավորներ կամ առարկաներ (նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ)

Համարժեք գույք (համարժեք գույքի բռնագրավման համատեքստում)

2. Եթե արգելադրումը առնչվում է դրամական միջոցների կամ դրանց համարժեք գույքի՝

- Միջոցների չափը, որը ենթակա է արգելադրման հարցումը կատարող պետության տարածքում՝ թվերով և տառերով (արժույթի վերաբերյալ նշումով)՝

(...)

- Արգելադրված միջոցների ընդհանուր չափը՝ թվերով և տառերով (արժույթի վերաբերյալ նշումով)՝

(...)

Հավելյալ տեղեկություններ՝

- Հարցումը կատարող պետության տարածքում անձի գույք կամ եկամուտ ունենալու մասին ենթադրություններ անելու հիմքերը՝

(...)

- Անձի գույքի կամ եկամտի աղբյուրի նկարագիրը (եթե հնարավոր է)՝

(...)

- Անձի գույքի կամ եկամտի աղբյուրի գտնվելու վայրը (եթե հայտնի չէ, վերջին հայտնի գտնվելու վայրը)՝

(...)

- Անձի բանկային հաշվի տվյալները, ում առնչվում է արգելադրման որոշումը (եթե հայտնի է)՝

(...)

3. Եթե արգելադրումը առնչվում է կոնկրետ գույքային միավորների (առարկաների) կամ դրանց համարժեք գույքի՝

Հարցումը կատարող պետություն հարցման կատարման հիմքը՝

Գույքային միավորները (առարկաները) գտնվում են հարցումը կատարող պետության տարածքում

Գույքային միավորները (առարկաները) գրանցված են հարցումը կատարող պետության տարածքում

---



---

□ Հարցումը ուղարկող պետությունն ունի ողջամիտ հիմքեր ենթադրելու, որ գույքային միավորները (առարկաները) կամ դրանց մի մասը գտնվում են հարցումը կատարող պետության տարածքում

Հավելյալ տեղեկություններ՝

- Հարցումը կատարող պետության տարածքում գույքային միավորների (առարկաների) գտնվելու վերաբերյալ ենթադրություններ անելու հիմքերը՝

(...)

- Գույքային միավորների (առարկաների) նկարագիրը՝

(...)

- Գույքային միավորների (առարկաների) գտնվելու վայրը (եթե հայտնի չէ, վերջին հայտնի գտնվելու վայրը)՝

(...)

- Այլ վերաբերելի տեղեկություններ (օրինակ՝ սնանկության կառավարիչ նշանակված լինելու վերաբերյալ)՝

(...)

---

## **ԲԱԺԻՆ 5. ԳՈՒՅՔԻ ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ**

### **1. Փաստերը հակիրճ նկարագիրը**

Ներկայացրել գույքի արգելադրման որոշում ընդունելու հիմնավորումները՝ մասնավորապես՝

- Փաստերի հակիրճ նկարագիրը, այդ թվում՝ հանցագործության նկարագրությունը՝

(...)

- Քննության փուլը՝

(...)

- Արգելադրում կիրառելու հիմքերը՝

(...)

- Այլ վերաբերելի տեղեկություններ՝

(...)

### **2. Հանցագործության բնույթը, իրավական որակումը և կիրառելի իրավական նորմերը՝**

(...)

---

---

(...)

3. Կիրառելի իրավական նորմերի հիման վրա որոշվող հնարավոր սանկցիան՝

(...)

(...)

4. Այլ վերաբերելի տեղեկություններ (օրինակ՝ կապը գույքի և հանցանքի միջև)՝

(...)

---

**ԲԱԺԻՆ 6. ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ/ԿԱՄ ՁԵՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄԸ**

Առկա է արգելադրման որոշման կատարումից հետո, դրանում ներառված տեղեկությունները գաղտնի պահելու անհրաժեշտություն, մասնավորապես՝

(...)

(...)

Առկա է արգելադրման որոշման կատարման ընթացքում ձևական պահանջների պահպանման անհրաժեշտություն, մասնավորապես՝

(...)

(...)

---

**ԲԱԺԻՆ 7. ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Արգելադրման որոշումը ներկայացվել է կատարման նաև այլ պետություն(ներ), մասնավորապես (պետությունը և իրավասու մարմինը)՝

(...)

(...)

2. Արգելադրման որոշումը ներկայացվել է կատարման մեկից ավելի պետություններ հետևյալ հիմնավորմամբ՝

Եթե արգելադրումը առնչվում է գույքային առանձին միավորների (առարկաների)՝

---

Ենթադրվում է, որ տարբեր առարկաներ, որոնց առնչվում է արգելադրումը, գտնվում են տարբեր պետությունների տարածքներում

Կոնկրետ առարկայի կամ առարկաների արգելադրումը ենթադրում է գործողությունների ձեռնարկում մեկից ավելի պետությունների կողմից

Եթե արգելադրումը առնչվում է դրամական միջոցների՝

Գույքի նախատեսվող ծավալը, որը կարող է արգելադրվել հարցումը ուղարկող պետության և հարցումը կատարող մեկ այլ պետության տարածքում հավանական է, որ բավարար չի լինի որոշմամբ արգելադրման ենթակա ամբողջ գույքի ծավալը բավարարելու համար

Այլ հիմնավորմամբ, մասնավորապես՝

(...)

3. Յուրաքանչյուր պետության տարածքում գտնվող գույքի արժեքը (եթե հայտնի է)՝

(...)

(...)

4. Եթե կոնկրետ գույքային միավորների (առարկաների) արգելադրումը ենթադրում է գործողությունների ձեռնարկում մեկից ավելի պետությունների կողմից, հարցումը կատարող պետության կողմից իրականացման ենթակա գործողությունների նկարագիրը՝

(...)

---

## **ԲԱԺԻՆ 8. ԿԱՊԸ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԲՆՈՒՅԹԻ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԵՏ**

Խնդրում ենք լրացնել, եթե այս արգելադրման որոշումը կապված է նախկինում ուղարկված այլ արգելադրման որոշման կամ փոխօգնության այլ հարցման հետ: Կիրառելի լինելու դեպքում, նախկինում ուղարկված որոշումը կամ հարցումը հայտնաբերելու համար ներկայացրեք հետևյալ տեղեկությունները՝

- Հարցման կամ որոշման տեսակը՝

(...)

- Ուղարկման ամսաթիվը՝

(...)

---

- 
- Մարմինը, որին ուղարկվել է հարցումը կամ որոշումը՝  
(...)
  - Ուղարկող մարմնի կողմից տրված հերթական համարը՝  
(...)
  - Կատարող մարմնի կողմից տրված հերթական համարը՝  
(...)

---

## **ԲԱԺԻՆ 9. ԲՈՒՆԱԳԱՆՁՈՒՄԸ**

Խնդրում ենք կատարել նշում, եթե՝

- Արգելադրման խնդրանքին զուգահեռ ներկայացվել է նաև ուղարկող պետության տարածքում կայացված բռնագանձման որոշում (բռնագանձման որոշման համարը)՝  
(...)
- Գույքը պետք է մնա արգելադրված կատարող պետության տարածքում մինչև բռնագանձման որոշման ուղարկումը և կատարումը (հնարավորության դեպքում՝ բռնագանձման որոշման ներկայացման նախատեսվող ժամկետները)՝  
(...)

---

## **ԲԱԺԻՆ 10. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

1. Խնդրում ենք հայտնել, եթե հարցումը ուղարկող պետությունը համաձայն է, որ հարցումը կատարող պետությունը կիրառի այլընտրանքային միջոցներ, եթե արգելադրումը մասամբ կամ ամբողջությամբ անհնարին է՝

- Այո
- Ոչ

2. Եթե այո, նշեք՝ ինչ միջոցներ կարող են կիրառվել՝  
(...)

---

## **ԲԱԺԻՆ 11. ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ**

---

---

1. Խնդրում ենք նշել, արդյո՞ք առկա է արգելադրված գույքը տուժողին վերադարձնելու վերաբերյալ որոշում՝

Այո

Ոչ

Եթե այո, խնդրում ենք լրացնել հետևյալ տեղեկությունները արգելադրված գույքը տուժողին վերադարձնելու որոշման վերաբերյալ՝

Որոշումը կայացրած մարմինը (պաշտոնական անվանումը)՝

(...)

Որոշման ամսաթիվը՝ (...)

Որոշման հերթական համարը (եթե առկա է)՝ (...)

Տուժողին վերադարձման ենթակա գույքի նկարագիրը՝ (...)

Տուժողի անունը, ազգանունը՝ (...)

Տուժողի հասցեն՝ (...)

Եթե գույքի նկատմամբ տուժողի իրավունքները վիճարկվում են, վիճարկման առնչվող մանրամասներ (վիճարկող անձը, վիճարկման հիմքերը և այլն)՝

(...)

(...)

Եթե այլ անձանց իրավունքները կարող են սահմանափակվել գույքը տուժողին վերադարձնելու հետևանքով, խնդրում ենք տրամադրել մանրամասներ հնարավոր սահմանափակումների վերաբերյալ (անձանց տվյալները, իրավունքները, որոնք կարող են սահմանափակվել, սահմանափակման պատճառները և այլն)՝

(...)

(...)

2. Արդյո՞ք հարցումը ուղարկող պետության տարածքում քննվում է արգելադրված գույքը տուժողին վերադարձնելու հարցը՝

Ոչ

Այո, կայացվելիք որոշումը կփոխանցվի հարցումը կատարող պետությանը

Խնդրում ենք հարցումը ուղարկող պետությունը տեղեկացնել գույքը ուղղակի կերպով տուժողին փոխանցելու վերաբերյալ:

---

## **ԲԱԺԻՆ 12. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

---

---

Որոշումը կայացրած պետության մարմինը, որը կարող է տրամադրել հավելյալ տեղեկություններ իրավական պաշտպանության գործընթացների և իրավական օգնության, թարգմանության հասանելիության վերաբերյալ՝

- Հարցումը ուղարկող մարմինը (Բաժին 13)
- Հարցումը հաստատած մարմինը (Բաժին 14)
- Այլ
- (...)

---

### **ԲԱԺԻՆ 13. ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՐՄՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Արգելադրման որոշումը կայացրած մարմինը՝

- Դատավոր, դատարան, դատախազ
- Այլ իրավասու մարմին

Մարմնի անվանումը՝ (...)

Կոնտակտային անձը՝ (...)

Պաշտոնը՝ (...)

Հասցեն՝ (...)

Հեռ՝ (...)

Ֆաքս՝ (...)

Էլ. հասցեն՝ (...)

Լեզուները, որոնցով հնարավոր է իրականացնել հաղորդակցում նշված մարմնի հետ՝ (...)

Անձը, որի հետ կարելի է կապ հաստատել հավելյալ տեղեկություններ խնդրելու կամ որոշման կատարման համար գործնական պայմանավորվածություններ ձեռք բերելու համար, եթե նա վերը նշված անձը չէ՝

Անունը, պաշտոնը, կազմակերպությունը՝ (...)

Հասցեն՝ (...)

Էլ. հասցեն/Հեռ՝ (...)

---

Արգելադրման որոշումը կայացրած մարմնի և/կամ դրա ներկայացուցչի ստորագրությունը, որը հավաստում է, որ սույն հարցման մեջ ներառված տվյալները ճշգրիտ են և ամբողջական՝

(...)

Անունը՝ (...)

Պաշտոնը՝ (...)

Ամսաթիվը՝ (...)

Պաշտոնական կնիքը (առկայության դեպքում)՝ (...)

---

#### **ԲԱԺԻՆ 14. ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԱԾ ՄԱՐՄՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Արգելադրման որոշումը հաստատած մարմինը՝

Դատավոր, դատարան, դատախազ

Այլ իրավասու մարմին

Մարմնի անվանումը՝ (...)

Կոնտակտային անձը՝ (...)

Պաշտոնը՝ (...)

Հասցեն՝ (...)

Հեռ՝ (...)

Ֆաքս՝ (...)

Էլ. հասցեն՝ (...)

Լեզուները, որոնցով հնարավոր է իրականացնել հաղորդակցում նշված մարմնի հետ՝ (...)

Մարմինը, որի հետ հարցումը կատարող պետությունը կապի մեջ է լինելու՝

Որոշումը կայացրած մարմինը

Որոշումը հաստատած մարմինը

Որոշումը հաստատած մարմնի և/կամ նրա ներկայացուցչի ստորագրությունը՝

(...)

---

Անունը՝ (...)

Պաշտոնը՝ (...)

Ամսաթիվը՝ (...)

Պաշտոնական կնիքը (առկայության դեպքում)՝ (...)

---

### **ԲԱԺԻՆ 15. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ**

Եթե հարցումը ուղարկող պետությունում առկա է կենտրոնական մարմին, որը պատասխանատու է արգելադրման վերաբերյալ հարցումները ուղարկելու և ստանալու համար, այդ մարմնի տվյալները՝

Կենտրոնական մարմնի անվանումը՝ (...)

Կոնտակտային անձի անունը՝ (...)

Պաշտոնը՝ (...)

Հասցեն՝ (...)

Հեռ՝ (...)

Ֆաքս՝ (...)

Էլ. հասցեն՝ (...)

---

### **ԲԱԺԻՆ 16. ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ինդերում ենք նշել հարցմանը կցող փաստաթղթերը՝

(...)

(...)

---